# Covid-19 համավարակի հասարակական, տնտեսական և իրավական դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում

**Հեղինակներ՝** **Մկրտչյան Արեմ**
**Օսիպյան Աշոտ**
**Սահակյան Սիրանուշ**

**Հուլիս, 2020**
**Երևան**

# 1. Հայաստանյան հասարակական կյանքի դրսևորումների փոփոխությունները Covid-19 համավարակի պայմաններում

**Բովանդակություն**


1. **Հետազոտության հիմնախնդիրը…..3**
2. **Հետազոտական աշխատանքների նկարագրություն……..4**
3. **Հետազոտական խնդիրների ներկայացում.....5**
4. **ՀՀ սոցիալ-քաղաքական փոխհարաբերությունները համավարակի պայմաններում.....6**
5. **ՀՀ սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունները համավարակի պայմաններում.....21**
6. **ՀՀ սոցիալ-մշակութային փոխհարաբերությունները համավարակի պայմաններում.....26**
7. **ՀՀ սոցիալ-հոգեբանական փոխհարաբերությունները համավարակի պայմաններում.....30**
8. **Եզրակացություն……...……...33**
9. **Օգտագործված գրականություն.....35**
10. **Հավելվածներ.....36**

**Հետազոտության հիմնախնդիրը**

Covid-19 համավարակով պայմանավորված՝ Հայաստանի հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից հաստատվել է արտակարգ դրության ռեժիմ: Այսպիսի ռեժիմը ենթադրում էր հասարակական կյանքի գոյություն ունեցող որոշ օրինաչափությունների փոփոխություն, իսկ որոշների՝ արգելք: Այսպիսով, ստեղծվեց նոր իրավիճակ, որտեղ հասարակական հարաբերությունների որոշ նախկին կանոնակարգեր սկսեցին չգործել, իսկ նոր կանոնակարգերին հարմարվելու համար հարկավոր էր ժամանակ: Հասարակական կյանքի առավել փոփոխված դրսևորումները արտահայտվեցին սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և սոցիալ-հոգեբանական մի շարք ոլորտներում: Այս ամենին զուգահեռ՝ տանը մեկուսանալու կամ ինքնամեկուսանալու պայմաններում տրանսֆորմացիայի սկսեցին ենթարկվել պետական, աշխատանքային, միջանձնային և խմբային հաղորդակցական ուղիները, ներգրավելով տեխնոլոգիական ժամանակակից հաղորդակցական միջոցների օգտագործման հնարավորությունները:

Այսպիսով, դեռևս մեկնաբանված չեն ՀՀ-ում, համավարակով պայմանավորված. հասարակական կյանքի փոփոխությունները և դրանց նոր դրսևորումները:

Սույն վերլուծությունը հիմնված է սոցիոլոգիական հետազոտության վրա, և արդյունքերը ներկայացնում են 2020 թվականի մարտի 16-ից ՀՀ-ում տեղի ունեցած փոփոխությունները՝ սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և սոցիալ-հոգեբանական ոլորտներում:

## Հետազոտական աշխատանքների նկարագրություն

### Մեթոդի նկարագրություն

Նշված հիմնախնդիրների հետազոտման համար իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն՝ փաստաթղթերի վերլուծության ավանդական մեթոդով, որտեղ որպես փաստաթղթեր կներկայացվեն էլեկտրոնային աղբյուրներում առկա հրապարակումները՝ տեքստային, պատկերային և տեսաձայնային ձևերով: Այսպիսի մեթոդը թույլ է տալիս առավել խորքային ներկայացնել սահմանված խնդիրները՝ սոցիոլոգիական հետազոտության դաշտային մեթոդների կիրառման անհնարինության պայմաններում (համավարակային իրավիճակով պայմանավորված):

Որպես երկրորդային վերլուծության տվյալներ՝ դիտարկվել են ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտների ցանցի նախաձեռնող խմբի կողմից 2020 թվականի մարտ-ապրիլ ամիսներին առցանց իրականացված սոցիոլոգիական քանակական հարցման տվյալները:

### Էլեկտրոնային փաստաթղթերի ընտրանք

Փաստաթղթերի ընտրանքում ընդգրկվել են 2020 թվականի մարտի 16-ից (արտակարգ իրավիճակի սահմանման սկիզբ) էլեկտրոնային մեդիայում և սոցիալական ցանցերում հրատարակվող նյութերը, որոնք ներկայացնում են ՀՀ-ում տեղի ունեցող գործընթացները համավարակի պայմաններում:

Որպես առավել ներկայացուցչական փաստաթղթեր՝ դիտարկվել են ըստ alexa.com-ի վարկանիշի հայաստանյան ամենաշատ այցելություններ ունեցող 100 կայքերում ընդգրկված լրատվական և սոցիալական կայքերը, ինչպես նաև՝ պետական մարմինների և պաշտոնյաների պաշտոնական կայքերը: Կայքերի ցանկը ներկայացված է հավելված 3-ում:

**Հետազոտական խնդիրների ներկայացում**

**Հետազոտության նպատակն է՝** իրականացնել Covid-19 համավարակի պայմաններում հայաստանյան հասարակական կյանքի հիմնական դրսևորումների փոփոխությունների, դրանց բաղկացուցիչների և դրսևորումների վերլուծություն:

**Հետազոտության օբյեկտի սահմանում:** Հետազոտության օբյեկտ են հանդիսանում ՀՀ համավարակով պայմանավորված իրավիճակը ցուցադրող և/կամ լուսաբանող էլեկրոնային հասանելի փաստաթղթերը (էլեկտրոնային հոդվածներ, պատկերային, տեսաձայնային և ձայնային նյութեր):

**Հատազոտական խնդիրներ:** Հետազոտության իրականացման համար առաջադրված էին հետևյալ խնդիրները.

1.Ներկայացնել ՀՀ-ում համավարակային իրավիճակով պայմանավորված հետևյալ սոցիալ-քաղաքական դրսևորումների վերլուծությունը.

- Պետության արձագանքների առանձնահատկություններ,
- Հաղորդակցական պետական մեխանիզմների փոփոխություն,
- Արտակարգ իրավիճակում որոշումների ընդունման առանձնահատկություններ (պարետատան աշխատանք),
- Քաղաքացիական հասարակության ակտիվության դրսևորման առանձնահատկություններ:

2. Ներկայացնել ՀՀ-ում համավարակային իրավիճակով պայմանավորված հետևյալ սոցիալ-տնտեսական դրսևորումների վերլուծությունը.

- Աշխատանքային հարաբերությունների (պետություն-գործատու, գործատու-աշխատող) կարգավորումները արտակարգ իրավիճակի պայմաններում,
- Սոցիալական աջակցության պետական նոր ծրագրերի իրականացում,
- Տեղաշարժի սահմանափակման պարագայում ընտանեկան տնտեսությունների կառավարման առանձնահատկություններ,
- Սպասարկման ոլորտի գործունեության սահմանափակման պարագայում սպառողական վարքի դրսևորման առանձնահատկություններ,

3. Ներկայացնել ՀՀ-ում համավարակային իրավիճակով պայմանավորված հետևյալ սոցիալ-մշակութային դրսևորումների վերլուծությունը.

- Կրթության կազմակերպման առանձնահատկություններ,
- Հասարակական, պետական միջոցառումների, տոների կազմակերպման և անցկացման առանձնահատկություններ,
- Տեղաշարժի սահմանափակման պարագայում առօրեականության դրսևորումների առանձնահատկություններ,

4. Ներկայացնել ՀՀ-ում համավարակային իրավիճակով պայմանավորված հետևյալ սոցիալ-հոգեբանական դրսևորումների վերլուծությունը.

- Հասարակական կյանքի և հարաբերությունների վերականգնման և/կամ շարունակության անորոշություն պարունակող դրսևորումներ,
- Հասարակական ֆրուստրացիայի կամ դրա նախապայմանների առկայություն,
- Ազատ տեղաշարժի և գաղտնիության իրավունքների սահմանափակման սոցիալ-հոգեբանական հետևանքներ,
- Համավարակային պայմաններում հիվանդանալու վախի, առողջապահության համակարգի նկատմամբ վստահության կամ անվստահության դրսևորումներ:

## ՀՀ սոցիալ-քաղաքական փոխհարաբերությունները համավարակի պայմաններում:

### Պետության արձագանքների առանձնահատկությունները

Համավարակով պայմանավորված՝ քաղաքական գործընթացների առանձնահատկությունները փաստացի սկսվեցին, երբ Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտ ամսից սկսվեց համավարակով պայմանավորված արտակարգ դրությունը: ՀՀ կառավարության մարտի 16-ի որոշմամբ սահմանվեց.

*«Կառավարությունը որոշել է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից, ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը, ժամը 17:00-ը ներառյալ՝ հայտարարել արտակարգ դրություն»:*[1]

[1] ՀՀ վարչապետի պաշտոնական վեբ-կայք, https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/03/16/Cabinet-meeting/, 08.06.2020 թ. 14:00

Այսպիսի դրությունը ենթադրում էր որոշակի հատուկ գործընթացներ հասարակության առողջական անվտանգությունը ապահովելու համար: Արտակարգ դրությունը նախ և առաջ հանգեցրեց նախկինում գոյություն ունեցող քաղաքական գործընթացների նպատակահարմարությունների վերանայմանը, և քաղաքական գործողությունների նոր ֆոկուսի սահմանմանը: Այսպես, օրինակ, հետաձգվեց սահմանադրական հանրաքվեն, որի քարոզչությունն արդեն ընթանում էր Հայաստանի ամբողջ տարածքով.

*«Ազգային ժողովի հատուկ նիստին վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ արտակարգ դրության պայմաններում հանրաքվե տեղի ունենալ չի կարող, հետևաբար ապրիլի 5-ի հանրաքվեն չեղարկվում է»:*[2]

Արտակարգ դրության պայմաններում կառավարությունը սկսեց վերակարևորել քաղաքական այս կամ այն գործընթացները և, առաջնային պլան բերելով համավարակի կանխարգելմանը ուղղված գործընթացները, ժամանակավորապես հետաձգեց կամ չեղարկեց այնպիսի գործընթացները, որոնց տրամաբանությունը չէր բխում հակահամաճարակային կանոնների պահպանումից:

Այսպիսի իրավիճակը առաջինն անգամ էր դրսևորվում ՀՀ-ում: Որպես հասարակական կյանքի փոփոխությունների սկիզբ, արտակարգ դրությունը առավել հետաքրքրական է իր տարբեր նորամուծությունների, բնականոն կյանքի փոփոխման, նոր կանոնակարգերի և օրենքների ներդրման տեսանկյունից:

Մարտի 16-ին, արտակարգ դրության հաստատումից ի վեր, սկսվեցին ակտիվ մշակվել նոր կանոնակարգեր և կառավարության որոշումներ, որոնք ուղղված էին ճգնաժամային կառավարմանը և համավարակի կանխարգելմանը:

Նախնական փուլը ուղեկցվում էր տարբեր պետությունների հետ հաղորդակցական ուղիների ժամանակավոր սահմանափակումներով: Այսպիսով, առաջնային սահմանափակվեցին Ռուսաստանի Դաշնության, Իրանի Իսլամական Հանրապետության հետ հաղորդակցությունները, բերելով խնդիրների մեծ քանակության՝ հիմնականում կապված ՀՀ քաղաքացիների Հայաստան վերադարձի հնարավորությունների սահմանափակումների և բեռնափոխադրումների կազմակերպման նոր ձևաչափերի հստակեցման հետ: Կանոնավոր ավիափոխադրումների չեղարկումների հետևանքով բազմաթիվ ՀՀ քաղաքացիներ

[2] https://iravaban.net/262066.html, 08.06.2020. 14:30

զրկվեցին հայրենիք վերադառնալու հնարավորությունից[3]: ՌԴ-ից, ինչպես նաև այլ երկրներից ՀՀ քաղաքացիներին հայրենիք վերադաձնելու համար ՀՀ կառավարությունը սահմանափակ թվով ավիափոխադրումներ կազմակերպեց դեպի Հայաստան: Այս շրջանում բոլոր ժամանումները պարունակում էին ռիսկեր՝ համավարակի տարածմանը խթան դառնալու տեսանկյունից:

Համավարակի համաշխարհային տարածման ավելի վաղ փուլերում չէին չեղարկվել համավարակի օջախներ հանդիսացող երկրներից դեպի ՀՀ ուղևորափոխադրումները, և չէին մեկուսացվել ժամանած ուղևորները, ինչի արդյունքում ՀՀ-ում գրանցվել էին հիվանդության առաջին դեպքերը (առաջին հաստատված դեպքը Իրանից ժամանած ՀՀ քաղաքացի, 01.03.2020[4]): ՀՀ առողջապահության նախարարը ժամանող ուղևորներին մեկուսացնելու անհրաժեշտության մասին նշեց.

*«ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը՝ մեկնաբանելով Հայաստանում գրանցված կորոնավիրուսի առաջին դեպքը, նշեց, որ Թեհրանից Հայաստան ժամանած 29-ամյա երիտասարդի հետ նույն ինքնաթիռում գտնվող բոլոր ուղևորներին մեկուսացնելն աշխատող գործիք չէ».*[5]

Սակայն արտակարգ դրության հաստատումից հետո վերահսկողությունը Հայաստան ժամանող ուղևորների նկատմամբ խստացվեց: Այսպիսի ուղևորների ՀՀ կառավարության ձեռնարկած այսպիսի քայլերը քննադատության արժանացան քաղաքական ընդդիմության կողմից: Ընդդիմադիր գործիչները հետագայում էլ համավարակի տարածման սկիզբը Հայաստանում սկսեցին բացատրել կառավարության ուշ արձագանքմամբ, համավարակի հանդեպ ոչ լուրջ վերաբեմունքով: Այսպիսի մեղադրանքներն էլ սկսեցին հիմնավորվել պետական տարբեր պատասխանատու պաշտոնյաների վաղ շրջանում կատարած հայտարարություններով.

«Ես կրկնում եմ, որ կորոնավիրուսը հատուկ վտանգավոր վարակ չէ:
Արսեն Թորոսյան»[6]:

[3] ՌԴ-ում ՀՀ դեսպան Վարդան Տողանյանի հարցազրույցը Հայաստան վերադառնալ ցանկացողների խնդիրների մասին, https://www.mfa.am/hy/COVID-19/2020/04/05/ru_int/10196, 10.06.2020, 15:00
[4] https://www.azatutyun.am/a/30462197.html, 10.06.2020, 16:00
[5] https://armeniasputnik.am/society/20200301/22230739/mekusacvel-e-32-qaxaqaci-haytni-e-vortegh-en-nranq-manramasner.html, 10.06.2020, 16:30
[6] https://iravaban.net/267503.html, 11.06.2020, 11:00

Միևնույն ժամանակ, արտակարգ դրության հայտարարումով և դրանից հետո, կառավարությունը ցուցադրում է տրամադրվածություն համավարակը, որպես ազգային անվտանգության լուրջ մարտահրավեր ընդունելու: Եվ սկսեցին ընդունել բավականին խիստ որոշումներ՝ համավարակի հետագա տարածումը կանխելու համար:

Պետական կառավարման հիմնական առանձնահատկությունը դարձավ սահմանափակումների փաթեթների կիրառումը: Կառավարությունը անցում կատարեց ավելի ռեպրեսիվ կառավարման: Սահմանափակումների դրույթ մտցվեց տեղեկատվության տրամադրման և տարածման համար: Այսպիսով, լրատվամիջոցներին և ֆիզիկական անձանց արգելվեց տարածել տեղեկատվություն, որը չի համընկնում պաշտոնական լրահոսի հետ.

*« Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքներից դուրս նոր կորոնավիրուսային հիվանդության վարակման առկա և նոր դեպքերի, անձանց առողջական վիճակի, վարակի աղբյուրների, առկա կամ հնարավոր վարակակիր անձանց հետ շփված այլ անձանց շրջանակի, զննում (վարակի թեստավորում) անցնող անձանց և մեկուսացվածների քանակի, առողջապահության բնագավառում լիազոր մարմնի կողմից իրականացվող միջոցառումների և դրանց վերաբերող տվյալների, ինչպես նաև ակնհայտ խուճապի հանգեցնող կամ խուճապային իրադրություն ստեղծելու իրական վտանգ պարունակող տեղեկությունների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների (այսուհետ՝ հաղորդում) հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ՝ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով, ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների կողմից կատարվում է միայն պարետատան կողմից տրամադրված տեղեկատվությանը (այսուհետ՝ պաշտոնական տեղեկատվություն) հղում կատարելով»:*[7]

Այսպիսի սահմանափակումների հիմքում դրվեցին հասարակության շրջանում խուճապային տրամադրությունների զսպման և համավարակի մասին ապատեղեկատվության տարածման դեմ պայքարի գաղափարները:

[7] Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի Մարտի 16-Ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, https://www.e-gov.am/gov-decrees/item/33585/, 07.06.2020, 12:00

Առաջինի կարևորությունն արտակարգ դրության իրավիճակում կառավարման մեխանիզմների լիարժեք օգտագործման հնարավորությունների պահպանման մեջ է, այդ թվում՝ նոր կանոնակարգերի լիարժեք կիրառման հնարավորությունը՝ վերահսկելի և կանխատեսելի հասարակական հարաբերությունների պայմաններում: Իսկ ապատեղեկատվության տարածումը կանխելը հանդիսանում է ճգնաժամային կառավարման ռազմավարական գործընթաց: Ապատեղեկատվության տարածվածությունը ՀՀ-ում շրջանառության մեջ դրեց տարբեր դավադիր տեսություններ, որոնք հիմք հանդիսացան հասարակության մեջ իրավիճակի լրջության նկատմամբ թերի ընկալումների համար: Այսպես, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտների ցանցի նաճաճեռնող խմբի կողմից իրականացված քանակական հարցումների տվյալներով ՀՀ-ում բնակչության 5%-ը ընդհանրապես չի վստահում պաշտոնական լրահոսին, իսկ 10%-ը չի կոմնորոշվում վստահության հարցում[8]: Այսպիսի տվյալները Covid-19 համավարակի պայմաններում բավականին ռիսկային են: Նույնիսկ 5% բնակչության չկառավարվող վարքագիծը կարող է լուրջ դերակատարություն ունենալ համավարակի տարածման տեսանկյունից: Եվ, չնայած նույն հետազոտությամբ բնակչության ճնշող մեծամասնությունը լիովին կամ հիմնականում վստահում են պաշտոնական լրահոսին, բայց վարակի տարածման առանձնահատկություններից ելնելով անհրաժեշտություն է ստեղծվում իրականացնել հակահամաճարակային կանոնների համատարած պահպանում:

Համաշխարհային այսպիսի մարտահրավերի պայմաններում, ինչպես շատ երկրներում, այնպես ել Հայաստանում տեղի ունեցան հասարակական կյանքի կազմակերպման բազմաթիվ փոփոխություններ: Փոփոխությունները վերաբերում էին հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներին: Առավել արմատական փոփոխությունների շարքից հատկանշական էր բազմաթիվ երկրներում, որպես համավարակի անհայտության նկատմամբ ռեֆլեքսիվ կառավարման ազդակ հանդիսացող կարանտինի հաստատումը: Հայաստանը գնաց նույն ճանապարհով՝ երկրի ողջ տարածքում մարդկանց ազատ տեղաշարժվելու հնարավորությունը սահմանափակվեց.

*« Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանափակել մարդկանց ազատ տեղաշարժվելու իրավունքը և սահմանել անձանց պարտադիր ինքնամեկուսացում իրենց մշտական բնակության կամ իրենց նախընտրությամբ մեկ*

[8] Մ. Գալստյան, Ա. Մալխասյան, Գ. Հովակիմյան, Ա. Մելքոնյան, Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում Covid 19 համավարակի ժամանակահատվածում հանրային տրամադրությունների ուսումնասիրություն, 2020թ.

*այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի հնարավոր տարածումը կանխելու նպատակով»*[9]*:*

Այսպիսի սահմանափակումները լիովին նոր էին ՀՀ համար, նախկինում չգործածված: Նոր պայմաններում խնդիր էր առաջանում առօրյա գործընթացները կազմակերպելու համար: Տեղաշարժի սահմանափակումը իր հետ բերում էր տարբեր մարտահրավերներ, որոնցից առավել բարդ հաղթահարելի էին սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային խնդիրները:

Կառավարման տեսանկյունից անհրաժեշտություն էր առաջանում բնակչության որոշ խմբերի աշխատանքի գնալու/աշխատելու հնարավորություն ստեղծել, կազմակերպել բնակչության սոցիալական ապահովվածությունը, կրթության իրավունքի իրացումը, հավատքի ազատ արտահայտման իրավունքը և այլ խնդիրներ:

Տնտեսական առումով բազմաթիվ դեպքերում նկատվում էր եկամուտի բացահայտ կորուստի դրսևորումներ: Առավել խնդրահարույց էին կոնկրետ ոլորտների աշխատակիցների եկամուտների կորուստի հարցերը:

Մշակվեցին որոշակի ծրագրեր, որոնք ուղղված էին սոցիալական ծառացած խնդիրների լուծմանը, այդ թվում նաև առավել տուժված ոլորտների աշխատակիցներին օժանդակություն տրամադրելուն:

Մարտի 18-ին ԿԳՄՍ նախարարը հայտարարեց ՀՀ կրթական համակարգի հեռաուսուցման ֆորմատի անցման մասին[10]: Սակայն այստեղ ևս բազմաթիվ էին խնդիրները հեռաուսուցման արդյունավետության, ուսուցիչների/դասախոսների, աշակերտների և ուսանողների մասնակցության պայմանների ապահովման, նոր գնահատման մեխանիզմների ներդրման և այլ տեսանկյուններից:

Այս և նմանատիպ այլ կարևոր խնդիրների լուծումը պետք է տեղի ունենար զուգահեռ և արագացված, ինչի արդյունքում էլ մեծանում էին ոչ ամբողջությամբ մշակված որոշումների կայացման ռիսկերը:

[9] Պարետի որոշում, 24 մարտի, 2020, N16, https://www.gov.am/files/docs/3969.pdf, 07.06.2020, 12:00

[10] https://www.azatutyun.am/a/30494955.html, 07.06.2020, 12:00

**Պետական հաղորդակցական մեխանիզմների փոփոխություն**

Պետություն-հասարակություն կապի ապահովումը արտակարգ դրության պայմաններում առավել է կարևորվում: Covid-19 համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում հասարակական-քաղաքական հաղորդակցության ուղիների փոխակերպումները իրավիճակային պահանջ էին:

Պետություն-հասարակություն հաղորդակցական հիմնական առանձնահատկություններից դարձավ էլեկտրոնային հաղորդակցության տարբեր հարթակների և գործիքների ներդրումը պետական կառավարման գործընթացներում: Հեռահաղորդակցության ժամանակակից միջոցները նախ և առաջ ապահովում էին համավարակի պայմաններում պետական որոշումների համապատասխան հասանելիություն և կառավարման մոբիլություն: Հաղորդակցական ավանդական ուղիների փոփոխությունները իրավիճակային անհրաժեշտություն էին նաև հաղորդակցության իրականացման գործընթացում մարդկային կուտակումները և շփումները բացառելու և վարակի տարածումը կանխելու համար: Այս տրամաբանությունը դրված էր համավարակի կանխման համար 2020 թվականի մարտ-ապրիլ ամիսներին իրականացվող միջոցառումների հիմքում, երբ դրանք առավելապես ենթադրում էին միջանձնային, միջխմբային շփումների սահմանափակումներ: Ինչպես պետական, այնպես էլ հասարակական տարբեր հաղորդակցական գործընթացներում սկսվեց ներդրվել հեռակապի միջոցով հանդիպումների կազմակերպման պրակտիկան:

Այս պայմաններում սկսվեց առավել կարևորվել զանգվածային հաղորդակցության միջնորդների (ԶԼՄ-ներ) դերը: Այնպիսի հաղորդակցական ուղիները ինչպիսիք են Covid-19 Armenia բջջային հավելվածը, սոցիալական ցանցերում ուղիղ եթերները հասանելի չեն Հայաստանի ամբողջ բնակչությանը և չեն կարող ամբողջությամբ փոխարինել ավանդական տեղեկատուներին (օրինակ՝ հեռուստատեսությանը): 2020 թվականի մարտ-ապրիլ ամիսներին կատարված սոցիոլոգիական հետազոտության տվյալներով հարցվողների 23%-ը, որպես տեղեկատվության աղբյուր ընդհանրապես չի դիտարկում համացանցը [2], այն պարագայում, երբ հարցումը առցանց էր և չէր ներառում առցանց հարթակներից չօգտվող մարդկանց:

Այսպիսով, հաղորդակցության թվային նոր միջոցների ներդրումը և դրանցով պետական դեկլարատիվ և կանոնադրական հաղորդակցության վարումը պարունակում է հասարակության լայն շերտերի չտեղեկացվածության ռիսկեր: Այս խնդիրը առավել սուր կարող էր արտահայտված լինել ՀՀ-ում բնակության վայրը լքելու

սահմանափակումների փուլում, երբ սահմանափակված էր նաև տեղեկատվության ցանցային տարածման հնարավորությունը:

Էլեկտրոնային հաղորդակցությունը դարձավ պետական հաղորդակցության հիմնական գործիք, ինչի արդյունքում անգամ պետական կառույցները սկսեցին բնակչության սպասարկումը իրականացնել էլեկտրոնային հեռավար եղանակներով՝ բացառելով միջանձնային շփումը: Այսպես, օրինակ, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը համավարակով պայմանավորված սոցիալական աջակցության պետական ծրագրերի համար հայտարարեց.

*«Կարգերը պատրաստ լինելուն պես ծրագրերը քաղաքացիներին հասանելի կլինեն **առցանց** տարբերակով: Աջակցություն ստացող քաղաքացիների ցանկը կհրապարակվի մեր կայքում: Եթե քաղաքացին համապատասխանում է երկու ծրագրի, ապա կարող է ընտրել միայն մեկը»[11]:*

Նմանատիպ մոտեցումը զերծ չէ խնդրահարույց լինելուց: Առաջնային խնդիրները կարող են կապված լինել առցանց հարթակների հասանելիության հետ: Ըստ համաշխարհային բանկի տվյալների՝ համացանցի օգտագործումը ՀՀ-ում 2018 թվականին կազմել է 69,7% անհատների դեպքում և 86,4% տնային տնտեսությունների դեպքում[12]: Այսպիսով բազմաթիվ քաղաքացիներ, հատկապես սոցիալապես խոցելի խմբեր, պետական էլեկտրոնային հաղորդակցության սպառման սահմանափակումներ ունեն:

Համավարակի և դրա պայմաններում գործող որոշումների ու ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար ՀՀ կառավարության մամուլի կենտրոնում ստեղծվեց տեղեկատվական կենտրոն, որի աշխատանքների շրջանակներում բնակչությանը տրամադրվում էր տեղեկատվություն հասարակական տարբեր ոլորտների նոր կարգավորումների վերաբերյալ: Կենտրոնում կազմակերպվում էին տարբեր պաշտոնյաների մամուլի ասուլիսներ, որոնց ընթացքում ՀՀ կառավարությունում հավատարմագրված լրատվամիջոցների ներկայացուցիչները հնարավորություն էին ունենում սոցիալական ցանցերի միջոցով ուղարկել հարցեր: Այսպիսի մոտեցումը բացատրվում էր միասնական տեղեկատվական հարթակի ստեղծման նպատակահարմարությամբ, մամուլի ասուլիսների ընթացքում լրագրողների կուտակումներից խուսափելու և

[11] https://www.aravot.am/2020/04/02/1103952/, 10.06.2020. 20:00
[12] S. Raja, S. Leuca, Worldbank, https://blogs.worldbank.org/digital-development/more-affordable-and-appealing-internet-services-equals-more-people-online-0, 17.06.2020. 20:00

պաշտոնական լրահոսի դերը բարձրացնելու համատեքստում: Այսպիսի մամուլի ասուլիսները հեռարձակվում են Հանրային հեռուստաընկերությամբ և ՀՀ կառավարության յութուբյան ալիքով, իսկ տեղեկատվական հոսքի կենտրոնացումից խուսափելու համար Հանրային հեռուստաընկերությունը ապահովում է հեռարձակման բաց ազդանշան:

Ընդհանուր առմամբ տեղեկատվությունը հանրությանը հասանելի է դառնում կիրառվող տեղեկատվության ուղիների բազմազանության համատեքստում: Սակայն տարբեր ուղիներ թիրախավորում են տարբեր հասարակական խմբերի, և հետևաբար, տեղեկացվածության բաշխումը Երևանում և մարզերում, թվային տեխնոլոգիաներից օգտվող և չօգտվող տարբեր խմբերում տեղի է ունենում անհամասեռ:

Հասարակության տեղեկացվածությունը, ինչպես նաև կառավարություն-հասարակություն կապը ապահովելու համար ստեղծվեց պարետատան թեժ գիծ, որը ուղղված էր արտակարգ դրության պայմաններում հավելյալ տեղեկատվության տրամադրմանը և երկկողմանի հաղորդակցության պահպանմանը: Երկկողմանի հաղորդակցությունը կարևորվում է նաև ՀՀ վարչապետի կողմից: Սոցիալական ցանցերում տարբեր կոչերով հանրությանը դիմելիս նա հորդորում է համավարակի կանխարգելման դեմ սկսել պետություն-հանրություն համագործակցություն: Այսպիսի համագործակցությունը ՀՀ վարչապետը դիտարկում էր հասարակական ինքնավերահսկողության տեսանկյունից.

*«Սիրելի հայրենակիցներ. Խնդրում եմ հակահամաճարակային կանոնների խախտման աղաղակող դեպքերը տեսանկարահանեք, լուսանկարահանեք եւ ուղարկեք իմ այս ֆեյսբուքյան էջին, հնարավորինս կոնկրետ եւ ճշգրիտ նշելով խախտման վայրը, ժամկետը, դրա հետ առնչություն ունեցող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց[13]»*

Ավելի ուշ նաև սկսվեցին հրապարակվել վարակակիր և ինքնամեկուսացած քաղաքացիների բնակության/գտնվելու վայրերը: Այսպիսով, համավարակի կանխման անհրաժեշտությունը սկսվեց գերադասվել քաղաքացիների անձնական կյանքի վարման և գաղտնիության իրավունքներից: Այսպիսի մոտեցումը միաժամանակ արժանացավ քաղաքական և հասարակական տարբեր շրջանակների քննադատությանը: Սոցիալ-քաղաքական հաղորդակցության այսպիսի մոտեցման

[13] ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի «facebook» սոցիալական ցանցի պաշտոնական էջից, 02.06.2020թ.

պայմաններում կառավարման խնդիրը ՀՀ-ում այլևս հասարակության արժեքանորմային համակարգի ձևավորումը չէ, այլ «համավարակի հաղթահարում ամեն գնով» սկզբունքը:

Ինքնավերահսկողության տեսանկյունից հիշատակման արժանի նորամուծություն է նաև Covid-19 Armenia բջջային հավելվածը, որը նպատակ ունի թեստավորել օգտվողի առողջական վիճակը և ապահովել համապատասխան կապը առողջապահության ոլորտի աշխատակիցների հետ, ինչպես նաև հավելվածը տրամադրում է կոմպլեքս տեղեկատվություն համավարակի վերաբերյալ:

Համավարակի հաղթահարման համար տեխնոլոգիաների կիրառումը շարունակվեց արդեն վարակակիր անձանց և նրանց շփման շրջանակները դիտարկելու և բացահայտելու համար:

Այսպես մարտի 31-ին կառավարության առաջարկով ԱԺ խորհրդարանը ընդունեց քաղաքացիների տեղաշարժը, հեռախոսազանգերի շրջանակը հասանելի դարձնելու նախագիծը: Ընդունված օրենքը հեռահաղորդակցման ընկերություններից պահանջում է իշխանություններին տրամադրել իրենց հաճախորդների հեռախոսահամարները և զանգեր կատարելիս ու տեքստային հաղորդագրություններ ուղարկելիս նրանց գտնվելու վայրը, ժամը և ամսաթիվը: Այսպիսի տվյալները պետք է օգտագործվեն կառավարության կողմից վերոնշյալ խնդիրների կատարումը ապահովելու համար:

Նախագիծը արժանացավ խիստ քննադատության ինչպես ԱԺ ընդդիմադիր խմբակցությունների կողմից, այնպես էլ տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների.

*«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխությունների այս նախագիծն Ազգային ժողովում ընդունվեց միայն իշխող խմբակցության ձայներով՝ 57 կողմով: Ընդդիմադիր «Լուսավոր Հայաստան» ու «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունները դեմ քվեարկեցին:[14]»*

Միջազգային հարթակում, Humans Right Watch-ը իր զեկույցում ներկայացնում է, որ նոր օրենքը Հայաստանում սահմանափակում է մասնավոր կյանքի իրավունքը Covid-19-ի դեմ պայքարում և շեշտում, որ ցանկացած սահմանափակում պահանջում է մարդու իրավունքների պաշտպանություն.

*«Հայաստանի կառավարությունը բախվել է հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակի, և տեխնոլոգիաները կարևոր դերակատարություն ունեն*

[14] https://www.azatutyun.am/a/30517623.html, 10.06.2020. 20:00

*հանրային առողջության վերաբերյալ ուղերձները տեղ հասցնելու և առողջապահության հասանելիությունը խթանելու գործում, բայց միաժամանակ, իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի զանգվածային վերահսկողության կիրառումը չխաթարի մարդու իրավունքները»*[15]*:*

**Արտակարգ իրավիճակում որոշումների ընդունման առանձնահատկություններ (պարետատան աշխատանքի օրինակով)**

ՀՀ-ում 2020 թվականի մարտի 16-ից հաստատված արտակարգ դրության պայմաններում պետական հակաճգնաժամային կառավարման լիազորությունները փոխանցվեցին պարետատանը: Կառավարության մարտի 16-ի որոշմամբ ստեղծվեց և սահմանվեց պարետատունը, պարետատան աշխատանքի սկզբունքները, լիազորությունները և իրավունքները[16]: Հակաճգնաժամային կառավարումը գլխավորեց ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը:

Հաստատված համաշխարհային համավարակի մասին գիտական և լաբորատոր ոչ բավարար տվյալների պայմաններում, ինչպես նաև նոր գիտելիքի ի հայտ գալուն զուգընթաց՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկությունների փոփոխման պայմաններում կարիք առաջանցավ իրավիճակին արագ արձագանքելու հնարավորություններ ստեղծել: Պարետատան կառավարման մոդելին անցնելը ընդհանուր առմամբ ապահովում է արագ որոշումների կայացման համար համապատասխան ճկունությունը:

Պարետատունը առաջին որոշմամբ, 2020 թվականի մարտի 17-ին, սահմանեց համաճարակաբանական լարված իրավիճակներ ունեցող երկրների ցանկը և սահմանափակեց ուղևորահոսքերը տվյալ երկրների հետ[17]: Ինչպես հետագայում հաստատվեց, այսպիսի որոշումը ուշացված էր և չնպաստեց ՀՀ-ում համավարակի տարածումը կանխելուն: Որպես վարակի առաջնային օջախներ ՀՀ-ում հանդես եկան Իրանից և Իտալիայից ժամանած և չմեկուսացված ուղևորներ: Վերջինի արդյունքում վարակը արագ տարածվեց ՀՀ քաղաք Էջմիածինում, որի արդյունքում էլ քաղաքի մոտքն ու ելքը սահմանափակվեց:

[15] Human Rights Watch, Free Speech, https://www.hrw.org/hy/news/2020/04/06/340302, 10.06.2020, 20:00
[16] Տե՛ս Կառավարության որոշում 298, https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/, 13.06.2020, 11:00
[17] Պարետի որոշում, 17 մարտի, 2020 N 1

Հաջորդիվ պարետատունը կայացրեց որոշումներ կապված տարբեր սահմանափակումների հետ, այդ թվում ժամանցային, տոնական միջոցառումների չեղարկում և արգելում, ՀՀ տարածքում մարդկանց տեղաշարժի հնարավորությունների սահմանափակումներ, առողջապահական ոլորտում գործածվող ապրանքների արտահանման ժամանակավոր սահմանափակումներ, որոշ տնտեսական գործունեությունների սահմանափակումներ և այլն:

Սահմանափակումներ ներառող ցանկացած որոշում իր հետ որպես հետևանք է բերում սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական որոշակի խնդիրներ: Ընդ որում պարետատան որոշումները հաճախակի լրացվում և փոփոխվում են, ինչը անորոշություն է բերում հասարակական փոխհարաբերություններ: ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտների հիմնադիր կազմի կողմից կատարված առցանց հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են նաև արտակարգ դրությամբ պայմանավորված հանրային տրամադրությունները: Պարզվել է, որ հարցվածների 74%-ի մոտ առկա է անորոշության զգացում, 24%-ի մոտ վախ, 25%-ի մոտ տագնապ և 4%-ի մոտ խուճապ [2]:

Հաստատված և երեք անգամ երկարացված արտակարգ դրությունը և դրա ընթացքում անընդհատ փոփոխվող հասարակական կարգավորումները հանգեցնում են **վերարտադրվող անոմիայի**:[18] Այսօր հայ հասարակության զգալի մասն այնպիսի անորոշ իրավիճակում է, որ շրջանցում է հասարակական վարքը կանոնակարգող պաշտոնական նորմերը, այդ թվում նաև ՀՀ պարետի հրահանգները: Համավարակի առումով անձնական անտարբերությունը հասնում է մեծ չափերի, իսկ կոլեկտիվ համերաշխությունը մղվաշ է հետին պլան:

Պարետատունը քաղաքական փոխհարաբերություններում ըստ էության հանդես է գալիս որպես հակաճգնաժամային գործընթացների կառավարման մոնոպոլ համակարգ: Այլ կառավարման ինստիտուտների գործունեությունը դառնում է համավարակի հետևանքների կարգավորումներ իրականացնելը, իսկ պարետատունը իրականացնում է համավարակի կանխարգելման ֆունկցիա:

Իշխող կուսակցության խորհրդրանական մեծամասնության պայմաններում, ինչպես նաև՝ ճգնաժամային կառավարումից ընդդիմության ներկայացուցիչների

[18] Անոմիայի հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրել հայտնի ֆրանսիացի սոցիոլոգ Էմիլ Դյուրկհեյմը բնութագրելու համար այնպիսի սոցիալական վիճակներ, երբ հին նորմատիվ կանոններն այլևս չեն գործում որպես մարդկանց վարքը կարգավորող համընդհանուր և պարտադիր հրամայականներ (տե՛ս E. Durkheim, Die Regeln der soziologischen Methode, Fr./M, 1999): Անոմիկ վիճակը բնութագրվում է նաև հակասությամբ հասարակայնորեն ընդունված համընդհանուր նպատակների և նրանց հասնելու ինստիտուցիոնալ միջոցների միջև:

օտարված լինելու պայմաններում սկսվեց առավել սրվել իշխանական և ընդդիմադիր քաղաքական բևեռների հարաբերությունները: Ընդդիմադիր բևեռի համար սահմանափակվում էր քաղաքական պրոցեսներում ազդեցության պահպանման նախկին հնարավորությունները:

**Քաղաքացիական հասարակության ակտիվության դրսևորման առանձնահատկություններ**

Համավարակային պայմանները ՀՀ-ում փոփոխություն մտցրեցին քաղաքական դրսևորումների տարբեր ասպեկտներում: Փոփոխությունների ենթարկվեցին քաղաքական հաղորդակցական մեխանիզմները, կառավարման խնդիրների առաջնահերթությունները: Այս ամենից անմասն չմնացին նաև ՀՀ-ում քաղաքացիական հասարակության դրսևորումները: Քաղաքացիական հասարակության ակտիվության դրսևորման որոշ նախկին հարթակներ (հավաքներ, փողոցային ակցիաներ) համավարակի պայմաններում այլևս չէին գործում: Այսպիսով, խնդիր էր առաջացել քաղաքացիական ակտիվությունը պահպանելու համար օգտագործել արտակարգ դրության պայմաններում հասանելի բոլոր հարթակները:

Նախնական շրջանում քաղաքացիական ակտիվությունը սկսեց դրսևորվել քաղաքացիներին հակահամաճարակային կանոնների մասին տեղեկացնելով, այդ օրերին հանրապետության տարածքում սուր պակասություն ունեցող պաշտպանության միջոցների (դիմակներ, ալկոգել) հայթհայթման, կամավոր արտադրության և անվճար բաժանելու գործընթացներով: Անկախ Առողջապահության նախարարության կոչերից, մարդկանց տարբեր խմբեր արագ ինքնակազմակերպվում էին, օրինակ՝ մարտի սկզբի օրերին հիվանդության օջախ համարվող Էջմիածին քաղաքում կամավորները ստեղծել էին բժշկական դիմակների տնային արտադրություն՝ քաղաքացիներին անվճար բաժանելու համար[19]:

Հետագայում սկսեցին համավարակի դեմ պայքարի համար կազմավորվել կամավորական խմբեր: Կամավորությունը դարձավ քաղաքացիական հասարակության դրսևորման հիմնական ձևը: Առողջապահության նախարարության

[19] Էջմիածնում կամավորները անվճար դիմակներ և ալկոգել են բաժանում, մարտի 18, https://www.youtube.com/watch?v=tNb5p6Sk7EE, 13.06.2020, 21:00

հասարակայնության հետ կապերի բաժնի պետը հայտնել է համավարակի դեմ հիվանդանոցներում պայքարելու համար հայտագրված 4000 կամավորների մասին.

*«Այս պահի դրությամբ, չնայած մենք հայտարարեցինք, որ արդեն շնորհակալ ենք, արդեն ունենք գրեթե բոլոր ուղղություններով կամավորներ գրանցված, բայց էլի զանգում են, էլի գրանցվում են մարդիկ, որոնք պատրաստ են իրենց թեկուզ փոքրիկ ներդրումն ունենալ: Հիմնականում բժշկական հանրությունն է՝ բժիշկներ, բուժքույրեր, նաև Բժշկականի ուսանողներ: Բայց քիչ չեն մարդիկ, որոնք իրենց ծառայությունն են առաջարկում ՏՏ ոլորտում, շինարարական գործերում, վարորդներ»*[20]

Միևնույն ժամանակ մոտ 1500 կամավոր հավաքագրեց նաև Հայաստանում Կարմիր խաչի ընկերությունը: Պարետատան և այլ կառավարման մարմինների հետ համագործակցությամբ և համակարգմամբ ՀԿԽԸ-ն սկսեց իրականացնել խոցելի խմբերի կարիքներին համապատասխան արձագանքման գործառույթներ[21]:

Քաղաքացիական հասարակության դրսևորումները արտահայտվում էին նաև հանրության իրազեկման գործընթացներում: Քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչներ իրականացնում էին անձնական հիգիենայի, վարակից պաշտպանության կանոնների իրազեկման ակցիաներ ինչպես թվային հարթակներում, այնպես էլ՝ քաղաքային տարբեր տարածքներում:

Քաղաքացիական հասարակության հիմնական ֆունկցիաներից է քաղաքացիական պահանջների մոբիլիզացիան և դրանք կառավարման մարմիններին հասանելի դարձնելը: Այս առումով, որպես հիմնական հարթակ, օգտագործվում են սոցիալական ցանցերը: Սոցիալական ցանցերը միշտ էլ հանդիսացել են քաղաքացիական հասարակության դրսևորման հիմնական հարթակներից մեկը: Սակայն արտակարգ դրության պայմաններում, երբ սահմանափակված է մարդկանց տեղաշարժի իրավունքը և արգելված հավաքների կազմակերպումը, սոցիալական ցանցերը առավել կարևորվեցին: Քաղաքացիական դիսկուրսը տարբեր ուղղություններով ծավալվում էր սոցիալական ցանցերում: Բայց, եթե ուղղահայաց (հանրությունից դեպի պետություն) պահանջմունքների ներկայացումը չի հանգեցնում արդյունքների, ապա արտակարգ դրության պատճառով հնարավոր չի դառնում կոլեկտիվ պահանջների ներկայացման ավելի

[20] https://www.azatutyun.am/a/30497724.html, 18.06.2020. 14:00
[21] https://www.redcross.am/news/coronavirus-arcs-activities.html?fbclid=IwAR1URISuJqmjsmRnMlQdAIaviF2VeNa4HzYl0gNkm0Ady3zvsaDBJ-YMd4Y, 19.06.2020, 17:00

կոշտ դրսևորումները, օրինակ՝ փողոցային քաղաքացիական պայքարը: Այսպիսով, արտակարգ դրության պայմաններում սահմանափակվում է նաև քաղաքացիական հասարակության հնարավորությունները ազդելու քաղաքական գործընթացների և հակահամաճարակային որոշումների կայացման վրա: Արտակարգ դրության պայմաններում ևս տեղի ունեցան փողոցային բողոքի ակցիաների կազմակերպման որոշ փորձեր, սակայն այդպիսի փորձերը ճնշվեցին օրենքի սահմաններում՝ ոստիկանական ուժի կիրառմամբ: Իսկ այդպիսի ճնշումները չեն հանդիսանում քաղաքացիական հասարակության իրավունքների սահմանափակում, քանի որ առաջնային կարևորությունը տրվում է արտակարգ դրության պայմանների կատարմանը: Այսպիսին էր օրինակ հետևյալ դրսևորումը.

*««Ոչ վարկային թալանին» նախաձեռնության անդամները հանդիպում են պահանջում ԿԲ նախագահի հետ: Նշենք, որ ոստիկանները բերման ենթարկեցին հավաքի մի քանի մասնակիցների, այդ թվում՝ Մանուել Մանուկյանին»:*[22]

Այսպիսով, քաղաքացիական հասարակության փոխակերպումները իրականացվում են **«պահանջմունքերի ներկայացում»** դրսևորումներից դեպի **«խնդիրների առցանց քննարկում»** դրսևորումների անցում կատարելով:

Քաղաքացիական հասարակության այլ կարևոր ֆունկցիա է քաղաքացիական արժեքների վերարտադրումը: Այստեղ նույնպես ակնառու են փոխակերպումներ, քանի որ ՀՀ-ում փաստացի հաստատված է նոր իրավիճակ, երբ նախկինում գոյություն ունեցող որոշակի սովորույթներ, վարքագծային մոդելներ և արժեքներ սկսում են չգործել: Սրանց փոխարինում են նոր նորմեր, որոնք փուլային մոդելներով ինտեգրվում են հասարակությունում, ունենալով մեկ նպատակ՝ կանխարգելել համավարակի տարածումը: Այս գործընթացներում մեծ է նաև քաղաքացիական նախաձեռնությունների դերը նախատիպերի ստեղծման և քաղաքացիական վերահսկողության տեսանկյունից: Ինչպես նշել է Արմինե Իշխանյանը, «քաղաքացիական նախաձեռնություններում ընդգրկված քաղաքացիներն իրենց ակտիվիզմը նկարագրում են որպես «ինքնորոշված» քաղաքացիություն և մեծ կարևորություն են տալիս անկախությանը, համերաշխությանը և ինքնակազմակերպմանը» և դեմ են քաղաքացիական հասարակության «հկ-անացմանը»:[23]

[22] https://a1plus.am/hy/article/367923, 19.06.2020. 17:00
[23] Իշխանյան Ա., Ինքնորոշվա՞ծ քաղաքացիներ. քաղաքացիական ակտիվիզմի նոր ալիքը Հայաստանում // Առցանց հրատարակություն՝ http://socioscope.am/archives/1128, 18.07.2020, 17:00

# ՀՀ սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունները համավարակի պայմաններում

## Աշխատանքային հարաբերությունների հատուկ կարգավորումները արտակարգ իրավիճակի պայմաններում

Համավարակի պայմաններում ձեռնարկված արտակարգ միջոցառումները առավելապես անդրադարձան ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Կառավարության ձեռնարկած այնպիսի քայլերը, ինչպիսին է արտակարգ իրավիճակի պայմաններում բնակչության տեղաշարժի սահմանափակումները, իրենց հետևից անխուսափելիորեն բերեցին սոցիալական վարչարարության խնդիրներ: Բնակության վայրը լքելու արգելքը անհնար էր դարձնում հազարավոր մարդկանց աշխատանքի ներկայանալը և հետևաբար զրկում էր նրանց եկամտից: Եթե որոշ կազմակերպությունների գործունեության ուղղվածությունը թույլ էր տալիս անցնել հեռավար աշխատանքի կազմակերպմանը (կրթության և գիտության ոլորտ, թվային տեխնոլոգիաների ոլորտ և այլն), ապա բազմաթիվ էին այնպիսի կազմակերպությունները և ձեռնարկատիրությունները, որոնց համար հեռավար աշխատանքի կազմակերպումը հնարավոր չէր (շինարարություն, արտադրություն և այլն): Ըստ կատարված սոցիոլոգիական առցանաց հարցման տվյալների հարցվողների 68%-ը մինչ կորոնավիրուսը կայուն զբաղվածություն է ունեցել և հետևաբար՝ կայուն եկամուտ: Նրանցից կեսից ավելին զբաղվածություն ունեն ծառայությունների մատուցման ոլորտում: Այս ոլորտը արտակարգ դրության իրավիճակում բավականին տուժվեց, քանի որ սահմանափակված էր այս ոլորտում գործունեություն ծավալող բազմաթիվ տնտեսվարողների գործունեությունը: Ընդ որում նույն հարցման մասնակիցների 62%-ը կարծում էր, որ իրավիճակի հանգուցալուծումից հետո կստեղծվեն սոցիալ-տնտեսական մարտահրավերներ [2]:

Պարետատան տարբեր որոշումների արդյունքում սահմանափակվեցին կամ արգելվեցին որոշ տնտեսվարողների գործունեությունը: Մասսայական միջոցառումների արգելքը վերաբերում էր այնպիսի ոլորտների, ինչպիսիք են սպորտը, մշակութային միջոցառումներ, ժամանցային կենտրոնները և այլն: Արտակարգ դրության հաստատումից ի վեր տնտեսական ակտիվության նվազումը ՀՀ ողջ տարածքում ակնհայտ է: Այսպես, օրինակ 2020 թվականի մայիս ամսվա տնտեսական վիճակագրական տվյալները նախորդ անցած նույն ժամանակահատվածի նկատմամբ վկայում են, որ անկում է ապրել

արդյունաբերական արտադրանքի ծավալը, շինարարության ծավալը, առևտրի շրջանառությունը և այլ տարբեր տնտեսական ցուցանիշներ[24]:

Համավարակով պայմանավորված իրավիճակը ստեղծեց տնտեսական միջավայրի գործառնության նոր համակարգ, որտեղ նախկինում գոյություն ունեցող տնտեսական գործունեության ձևերից որոշները չէին կարող տեղ ունենալ: Եթե պարենային անվտանգության, առողջապահական պարագաների արտադրության, առաքման ծառայությունների և այլ տնտեսական գործունեության ձևեր սկսեցին առավել կարևորվել քան նախկինում, ապա, օրինակ, զբոսաշրջության, ժամանցային ակումբների, միջազգային ուղևորափոխադրումների ոլորտները դադարեցին գործունեության ծավալումը: Տնտեսական գործունեության տարբեր ոլորտների պահանջարկների այսպիսի նոր դասակարգումը ստեղծեց սոցիալական ապահովվածության նոր բաշխումներ և ռիսկային նոր խմբեր:

Պետական աջակցությունը տարբեր տնտեսվարող սուբյեկտներին կոչված էր պահպանելու վերջիներիս գոյությունը: Իրավաբանական և ֆիզիկական տարբեր անձանց գործունեությունը պահպանելու նպատակով ՀՀ կառավարությունը ներկայացրեց կորոնավիրուսի տնտեսական հետևանքների հակազդման տարբեր միջոցառումներ, որոնցից առավել հատկանշական է պետության համաֆինանսավորմամբ վարկերի տրամադրումը[25]: Այսպիսի վարկավորման հնարավորությունը կարևորվում է նաև տարբեր տնտեսվարողների աշխատակիցներին համավարակի պայմաններում աշխատավարձի վճարման շարունակությունը ապահովելու համար: Ինչպես նշել է ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանը.

*«Վարկը պետք է լինի նպատակային: Կազմակերպությունը վարկ է վերցնում, որ աշխատավարձ վճարի աշխատակիցներին 3 ամսվա համար…»*

Միևնույն ժամանակ մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին աջակցելու համար ՀՀ կառավարությանը ապրիլի 9-ին որոշեց տրամադրել միանվագ օգնություն: Այդպիսի շահառուներին հաշվարկելու և ցուցակագրելու համար հիմք ընդունվեցին տնտեսվարողների, պետական եկամուտների կոմիտեում գրանցված աշխատակիցների տվյալները[26]:

Այսպիսի որոշմամբ աջակցություն էր տրամադրվում միայն փաստացի գրանցված աշխատողներին, իսկ չգրանցված աշխատողներին պետությունը չէր

[24]ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/am/?nid=12&thid=&type=0&submit=Փնտրել, 15.07.2020, 14:00
[25] https://armeniasputnik.am/armenia/20200326/22527038/karavarutyun-biznes-tntesutyun-nikol-pashinyan-tigran-xachatryan.html, 15.07.2020, 14:30
[26] Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, N 507-L, 9 ապրիլի 2020:

կարողանում իդենտիֆիկացնել և հետևաբար չէր աջակցում: Ըստ ՊԵԿ վիճակագրության 2020 թվականի ապրիլին գրանցված աշխատակիցների թիվը կրճատվել է 74.359-ով՝ 621.544-ից դառնալով 54.7185[27]: Մյուս կողմից բազմաթիվ են ՀՀ-ում չգրանցված աշխատողները (այդ թվում՝ օրավարձով աշխատող և ծառայությունների մատուցման պայմանագրով աշխատող): Այս առնչությամբ հայտարարությամբ է հանդես եկել նաև ԱԺ փոխնախագահ Լենա Նազարյանը.

*«Սոցիալական աջակցություն ստանալու կարիք ունեցողներն արդեն ստիպված անթաքույց խոսեցին, որ գործատուները չեն գրանցել իրենց աշխատանքը եւ չեն վճարել հարկեր, որոնք հիմա հնարավոր կլիներ վերադարձնել այդ աշխատողներին սոցիալական ծրագրերի միջոցով: Հայտնի դարձավ, որ որոշ գործատուներ անգամ պահանջել են իրենց աշխատողներից սոցիալական աջակցության մի մասը տալ իրենց:[28]»*

Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ պետական աջակցության թիրախավորումը ամբողջական չի իրականացվում: Արդյունքում բազմաթիվ կարիքավորներ չեն ստանում աջակցություն:

Այսպիսի սոցիալ-տնտեսական խնդիրները անշուշտ չեն կարող չազդել ՀՀ որոշ քաղաքացիների հակահամաճարակային նորմերի պահպանման վարքագծի վրա: Ֆինանսական խնդիրները լուծելու անհարժեշտությունը հաճախ հակադրվում է պարետատան սահմանած կարգերին: Այս հանգամանքը առավել վառ է արտահայտված արտակարգ դրության վաղ շրջանում, երբ սահմանված էին տեղաշարժի ազատ իրավունքի սահմանափակումներ:

Համավարակով պայմանավորված՝ արտակարգ իրավիճակում երկրում հաստատված սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրավիճակին հակազդելու համար ՀՀ կառավարությունը ընդունեց մի շարք որոշումներ և կազմեց կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման մի շարք ծրագրեր: Այսպիսի ծրագրերը կոչված են առանձին-առանձին թիրախավորելու իրավիճակից տուժած քաղաքացիներին և տնտեսվարողներին: Անգամ ճշգրիտ թիրախավորված պետական օժանդակությունը չի կարող երկարատև հեռանկարով ապահովել աշխատանքը կորցրած կամ աշխատելու հնարավորությունից զրկված քաղաքացիների սոցիալ-տնտեսական խնդիրները, քանի որ այն հաճախ միանվագ է և վճարված գումարների չափն էլ ավելի քիչ է, քան հնարավոր է ստանալ աշխատանքի միջոցով (օրինակ՝ աշխատանքը մարտ ամսին կորցրած անձը

[27] https://hetq.am/hy/article/117837, 15.07.2020, 18:00
[28] https://news.am/arm/news/576022.html, 15.07.2020, 18:00

միանվագ կարող է ստանալ 68.000 դրամ օժանդակություն[29], իսկ միջին աշխատավարձը հունվարից մինչև մարտ կազմում էր 190,138 դրամ[30]):

Այսպիսով, սոցիալ-տնտեսական իրավիճակը ՀՀ-ում ուղիղ կապված է բնակչության հակահամաճարակային վարքի պահպանման հետ:

**Տեղաշարժի սահմանափակման պարագայում ընտանեկան տնտեսությունների կառավարման և սպառողական վարքի դրսևորման առանձնահատկություններ**

Արտակարգ իրավիճակով պայմանավորված սահմանափակումները հետաքրքիր փոփոխություններ առաջացրեցին նաև ՀՀ-ում ընտանեկան տնտեսությունների կառավարման տեսանկյունից: Նախ և առաջ մարտի 24-ին ՀՀ ամբողջ տարածքում սահմանափակվեց մարդկանց ազատ տեղաշարժի իրավունքը և սահմանվեց ինքնամեկուսացման ռեժիմ բնակարաններում կամ գտնվելու վայրերում:

Այսպիսի սահմանափակումը անհնարին էր դարձնում ընտանեկան տնտեսության կառավարման նախկին պրակտիկաներից շատերը, օրինակ՝ սննդամթերքի և դեղամիջոցների գնումները: Եվ եթե պարետատան կողմից որոշ սահմանափակումներով թույլատրվում էր խանութներ այցելությունները, սակայն հիվանդանալու վախը, խանութներում սննդամթերքի վերջանալու մտավախությունները և անհարմարություններից խուսափելու ցանկությունը սկսեցին ստեղծել գնումներ կատարելու նոր մշակույթ: Մասնավորապես գնումները սկսեցին կատարվել ավելի մեծ քանակով՝ երկար ժամանակով պարենային ապահովվածություն ստեղծելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Գնումներ կատարում էին նաև բարեկամների և հարազատների համար, որպեսզի վերջիններս ստիպված չլինեին այցելել խանութներ: Ինչպես նշում էին գնորդները.

[29]Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, N 410-L, 30 մարտ 2020:
[30]ՀՀ վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/am/?nid=12&id=08001

*«Այսքան բանն առնում եմ, որ տանեմ, համ երեխուս տամ, օգնեմ, համ էլ որ դուրս չգամ էլի: Մենք մարդ ու կին ենք, իրենք հեռու են մնում, չեն կարող այդքան գան, հասնեն, գնան, համ էլ մեքենա չունեն, իսկ ես ունեմ»[31]:*

Արդյունքում ապրիլ ամսվա սկզբի օրերին սպառումը Երևանում սկսեց կրել չվերահսկվող՝ խուճապային բնույթ: Լրատվական տարբեր կայքեր սկսեցին հայտնել խանութներում որոշ ապրանքների դատարկ ցուցափեղկերի մասին[32]: Սա պայմանավորված էր քաղաքացիների մտավախություններով, որ վիրուսի պատճառով կարող են լինել թանկացումներ կամ սպառվեն հիմնական պարենային ապրանքները: Խնդրի խորացումը կանխարգելելու նպատակով ՀՀ ՏՄՊՊՀ-ն հանդես եկավ հայտարարությամբ՝ վստահեցնելով, որ մեծածավալ գնումներ կատարելու անհրաժեշտություն չկա[33]: Առաջին սպառման ապրանքների շարքերում էին ինչպես սննդամթերքը, այնպես էլ ախտահանման միջոցները և բժշկական դիմակները: Վերջիններս սկսել էին սպառվել դեռ փետրվար ամսին՝ Չինաստանում և Եվրոպայում վիրուսի տարածման տեղեկատվության համատեքստում[34]:

Տարեց մարդիկ նոր կորոնավիրուսի խոցելի խմբում են, վիրուսը հատկապես նրանց համար է վտանգավոր: Տարեց մարդկանց համար գնումներ կատարելու կոչով հանդես եկավ նաև ՀՀ վարչապետը, ինչպես նաև նրանց համար սահմանվեցին խանութներ այցելելու հատուկ ժամեր (10:00-12:00)[35]:

Մյուս կողմից առաքման ծառայությունների միջոցով գնումներ կատարելու պրակտիկաների աճ տեղի չունեցավ, ինչը սակայն նկատվում է արտակարգ իրավիճակում գտնվող այլ երկրներում: Ինչպես նշում են առաքման ծառայությունների ներկայացուցիչները.

*«Մարդիկ սնվում են տանը և օգտագործում այն պաշարները, որ ձեռք են բերել ու բերում մթերային խանութներում: Պատճառն այն է, որ Հայաստանում ու Վրաստանում անորոշությունը սահմանափակումների տեսանկյունից բավականին մեծ է: Մարդիկ անորոշության պայմաններում անցել են խնայողության ռեժիմի: Իսկ Բելառուսում ու Ուկրաինայում ավելի հստակ է: Այնտեղ մեր պատվերներն աճել են[36]»:*

---

[31] https://www.azatutyun.am/a/30508510.html, 16.07.2020, 19:00
[32] https://www.tert.am/am/news/2020/03/01/koronavirus-armenia/3224697, 12.07.2020, 14:00
[33] ՀՀ ՏՄՊՊՀ, http://competition.am/index.php?page=&menu=174&newsID=1641&lng=1
[34] https://www.youtube.com/watch?v=qnQ4IIrGxes, 12.07.2020, 14:30
[35] Նույն տեղում:
[36] https://www.civilnet.am/news/2020/03/24/Կորոնաբիզնես-ճգնաժամից-բարգավաճող-բիզնեսներ/379628, 12.07.2020, 15:00

Ամփոփելով, կարելի է պնդել, որ արտակարգ դրության հաստատումից ի վեր ՀՀ-ում փոխվել է սպառողական վարքի ընդհանուր տրամաբանությունը: Ապագայի նկատմամբ ունեցած անորոշությունը ստեղծել է սպառողական վարքի ուղղվածության հստակ վեկտորներ, երբ երկրորդային անհրաժեշտության (ոչ ֆիզիոլոգիական անհրաժեշտության) ապրանքների նկատմամբ կա հստակ պահանջարկի անկում, և՝ հակառակը:

## ՀՀ սոցիալ-մշակույթային փոխհարաբերությունները համավարակի պայմաններում

### Կրթության կազմակերպման առանձնահատկություններ

Համավարակով պայմանավորված՝ իրադրությունը, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, ստիպեց դադարեցնել կրթական ավանդական գործընթացները: Դասարանային և լսարանային ուսուցումը հակասում է հակահամավարակային միջոցառումներին և կարող է վարակի տարածումը դարձնել անվերահսկելի: Արդյունքում՝ ՀՀ կրթության նախարար Արայիկ Հարությունյանի որոշմամբ կրթական համակարգը Հայաստանում 2020 թվականի մարտից անցավ հեռավար ուսուցման[37]:

Հեռավար ուսուցման պրակտիկան ՀՀ-ում սկսել էր կիրառվել մինչև համավարակը, և, մասնավորապես, բարձրագույն ուսումնական հաստատություններում կիրառվում էր լսարանային դասընթացներին զուգընթաց: Իրավիճակը տարբեր է դպրոցական կրթության համակարգում, որտեղ հեռավար ուսուցման պրակտիկան նախկինում չէր կիրառվում:

Հեռավար ուսուցման արդյունավետ կազմակերպման համար սկսեցին ստեղծվել էլեկտրոնային տարբեր հարթակներ, որտեղ հնարավոր կլիներ գտնել կրթական պրոցեսի համար նախատեսված տարբեր մեդիա նյութեր, էլեկտրոնային գրականություն և այլն: Առավել նշանակալի հարթակներից է ԿԳՄՍ

[37] https://www.azatutyun.am/a/30494955.html, 12.07.2020, 16:00

նախարարության կողմից ստեղծված «heravar.armedu.am» հեռավար ուսուցման համալիր հարթակը, որտեղ մեկտեղված են կրթական տարբեր էլեկտրոնային աղբյուրներ:

Արտակարգ իրավիճակի հաստատումը անկանխատեսելի էր ՀՀ կրթական համակարգի համար և հետևաբար չկար մշակված հեռավար ուսուցման պատրաստի ֆորմատներ ԲՈՒՀ-երի և դպրոցների համար: Դպրոցների համար սեղմ ժամկետներում մշակվեցին ընդհանուր որոշակի գործիքներ (Հանրային հեռուստաընկերության եթերում դասեր, էլեկտրոնային հարթակներ), իսկ բարձրագույն որակավորման հաստատությունները իրենք էին որոշում, թե ինչ ֆորմատով անցկացնեն հեռավար ուսուցումը: Նախնական փուլում չկար ընդհանուր կարգավորում և ամեն դասախոս ինքն էր որոշում իր համար առավել ընդունելի էլեկտրոնային գործիքները և դասընթացի ֆորմատը:

Կատարված առցանց հարցման տվյալների համաձայն, հարցվողների 59%-ը ստեղծված իրավիճակը վտանգավոր էին համարում կրթության որակի համար, իսկ 39%-ը իրենց երեխաների կրթության որակը համարում էին իրենց հիմնական խնդիրներից [2]: Հետևաբար կարևոր էր ոչ միայն հեռավար կրթության անցումը, այլ այդպիսի կրթության որակը:

Նոր ներդրվող հեռավար ուսուցումը իր հետ բնականաբար բերեց բազմաթիվ խնդիրներ թե՛ կրթության կազմակերպման տեսանկյունից, և թե՛ կրթության հասանելիության տեսանկյունից: Հեռավար ուսուցմանը մասնակցելու համար պարտադիր էր դառնում համացանցի հասանելիությունը և էլեկտրոնային համապատասխան սարքավորումների առկայությունը: ՀՀ-ում համացանցի հասանելիությունը տնային տնտեսություններին 2018-ին եղել է 86,4% [WorldBank], և անգամ դրական աճի պարագայում 2020 թվականին համացանցը հասանելի չէ ՀՀ բոլոր բնակիչներին: Մյուս կողմից էլ ժամանակակից սարքավորումներ ոչ բոլոր տնային տնտեսություններում էին առկա: Ըստ ԿԳՄՍ նախարարի, մարտ ամսվա դրությամբ հանրապետությունում առկա է 21 հազար էլեկտրոնային սարքավորման պակաս.

*«Ըստ հանրապետության մարզերից ստացված տվյալների՝ հեռավար կրթություն բոլորին հասանելի դարձնելու համար մոտ 21 հազար սարքավորման պահանջարկ կա: Այդ նպատակով նախարարությունը դիմում է կազմակերպություններին և անհատներին՝ այս հարցում համագործակցելու և աջակցություն ցուցաբերելու նպատակով[38]»:*

[38] https://www.gov.am/am/news/item/14199/, 14.07.2020, 12:00

Այսպիսով, համավարակով պայմանավորված իրավիճակում ՀՀ-ում խախտվեց բազմաթիվ բնակիչների կրթություն ստանալու իրավունքը և հնարավորությունը: Մյուս կողմից էլ հեռավար ուսուցման չհղկված ձևաչափերը, որոնցից շատերը կիրառվում էին ուսուցիչների և/կամ ուսումնական հաստատությունների սուբյեկտիվ նախաձեռնությամբ, ըստ տարբեր փորձագետների կարծիքների,[39] չեն կարող արդյունավետությամբ փոխարինել ավանդական կրթությանը:

**Հասարակական, պետական միջոցառումների անցկացման և առօրեականության դրսևորումների առանձնահատկություններ**

2020 թվականի մարտից սկսած չեղարկվեցին և հետաձգվեցին ՀՀ ողջ տարածքով տոների, բազմամարդ միջոցառումների կազմակերպումը և անցկացումը: Այսպիսի տրամաբանությունը հասկանալի է համավարակի պայմաններում, սակայն այն առավել ուշագրավ է դիտարկել հայ ազգային ինքնության պահպանման և փոխանցման տեսանկյունից:

2020 թվականի ապրիլի 24-ը հայոց զոհերի ոգեկոչման 105-րդ տարելիցն էր: Նախորդ տարիներին այս օրը ՀՀ ամբողջ տարածքում իրականացվում էին բազմաթիվ բազմամարդ միջոցառումներ, որոնք նպատակ ունեին հարգել 1915 թվականի ոճրագործության զոհերի հիշատակը: Այս առումով առանձնացավ 2020 թվականը, քանի որ համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակը թույլ չէր տալիս անցկացնել բազմամարդ միջոցառումներ: Դեռևս ապրիլի 11-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ ապրիլի 24-ին ՀՀ-ում կանցկացվեն միայն արարողակարգային միջոցառումներ[40]:

Այս հիշատակի օրը մեծ ազդեցություն ունի հայերի կոլեկտիվ հիշողության պահպանման և փոխանցման տեսանկյունից, և դրա համար նախատեսված միջոցառումների չեղարկումը աննախադեպ էր ՀՀ բնակչության համար: Կարանտինային պայմաններում հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում

[39] Տե՛ս օրինակ՝ https://news.am/arm/news/568212.html կամ http://www.ysu.am/news/hy/Distance-learning-at-the-faculty-of-Informatics-and-Applied-Mathematics, 14.07.2020, 13:00
[40] https://armeniasputnik.am/armenia/20200411/22695307/koronavirus-aprili-24-pashinyan.html, 18.07.2020, 14:00

հարգանքի տուրք մատուցելու անհնարինությունը հայերի կողմից ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի տուրքի մատուցումը տեղափոխեց համացանց[41]:

Հաջորդ ուշագրավ տոնակատարությունը, որը անցկացվեց սահմանափակումներով, Սուրբ Հարության տոնն էր (Զատիկ): Տասնյակ հազարավոր քրիստոնյաներ միայն ուղիղ հեռարձակմամբ (այդ թվում համացանցում) կարողացան հետևել Սուրբ Հարության տոնի պատարագին: Համացանցը դարձավ նաև հարթակ միջանձնային շփման համար: Վարակի մարդուց-մարդ փոխանցվող բնույթը ստիպեց հեռահաղորդակցության միջոցներով կազմակերպել աշխատանքային, ժամանցային, տնտեսվարման, գիտական, կազմակերպչական և այլ հաղորդակցությունները:

Այսպիսով, համավարակով պայմանավորված՝ արտակարգ իրավիճակի պայմաններում միջանձնային, միջխմբային և առօրեական հաղորդակցությունը ստացավ առցանց բնույթ, ինչի մասշտաբները աննախադեպ են ՀՀ-ի համար: Այսպիսի ձևավորված պրակտիկաները կարող են պահպանվել նաև համավարակի հաղթահարումից հետո, ինչի արդյունքում էլ պետք է ձևավորվեն հասարակական փոխհարաբերությունների նոր՝ «վիրտուալ հաղորդակցության» մոդելները:

Համավարակով պայմանավորված ինքնամեկուսացման ռեժիմը ուշագրավ էր նաև առօրեա փոխհարաբերությունների կազմակերպման տեսանկյունից: Օրինակ, կատարված առցանց հետազոտության շրջանակներում հարցվողների 11%-ը նշել է, որ մեկուսացման պայմաններում իրենց ընտանեկան հարաբերությունները ավելի լարված են դարձել [2]: Այսպիսի լարվածությանը խթաններ կարող են հանդիսանալ աշխատանքային, բնակարանային, հանգստի կազմակերպման և սոցիալ-տնտեսական այլ տարբեր խնդիրներ: Սոցիալական փոխհարաբերություններում խնդիրները արտահայտվեցին ոչ միայն ընտանեկան միջավայրում: Տարբեր այլ դրսևորումներում նույնպես դիտարկվում էին ռիսկեր: Այսպես, օրինակ կատարված հարցման մասնակիցների 43%-ը նշում էր, որ ստեղծված իրավիճակը վտանգավոր է իրենց սոցիալական կապերի պահպանման համար [2]:

Այսպիսով, իրավիճակով պայմանավորված, անհնարին դարձան սոցիալական կյանքի կազմակերպման բազմաթիվ նախկին պրակտիկաներ, որանց մարդիկ արդեն հարմարվել էին, ինչն էլ հանգեցրեց տարբեր առօրեա սոցիալական փոխհարաբերությունների փոփոխման:

[41] Տե՛ս օրինակ՝ Հավելված 2

## ՀՀ սոցիալ-հոգեբանական փոխհարաբերությունները համավարակի պայմաններում (ընդհանրացված խնդիրներ)

Արտակարգ պայմաններում մարդկանց մոտ առաջանում է անորոշության և անվստահության զգացում, ինչն էլ կարող է հանգեցնել իրար և կառավարության նկատմամբ կառուցվածքային վստահության կորստի[42]: Պետք է նկատի ունենալ նաև, որ տարիներ շարունակ Հայաստանի քաղաքացիների մոտ ցածր էր պետական ինստիտուցիոնալ հաստատությունների նկատմամբ սոցիալական վստահության մակարդակը: Իսկ այդ վստահությունը իշխանություն-քաղաքացի սոցիալական հաղորդակցությունների արդյունավետության հիմքն է: Համավարակը միայն սրել է վաղուց գոյություն ունեցող հիմնախնդիրը:

Այս առումով ՀՀ-ում Covid-19 համավարակով պայմանավորված ճգնաժամը կարելի է բաժանել 3 հիմնական փուլերի.

**Նախանշանների փուլ**- Այս շրջանը Հայաստանում արտահայտվել է արտակարգ դրության հայտարարման սկզբից և ավարտվել տեղաշարժի սահմանափակումների թուլացմամբ: Մարդկանց հիմնական արձագանքը այս իրավիճակին հանդիսացավ հենց իրավիճակի մերժումը՝ տրամադրվածությամբ, որ շուտով կավարտվի իրավիճակը և բոլորը կվերադառնան իրենց «նորմալ» կյանքին, ինչպես նաև՝ նոր իրավիճակի խուճապային ընկալումը: Ըստ կատարված հետազոտության արդյունքների հարցվողների 8% նշել է, որ ինքնամեկուսացման կանոնները չի պահպանել՝ չի ինքնամեկուսացել և ապրել է բնականոն կյանքով [2]: Իսկ խուճապային տրամադրությունները արտահայտվում էին խուճապային գնումներում, երբ անգամ վարակի տարածման նախնական փուլերում դեղատներում խուճապային գնումների պատճառով սպառվել էին բժշկական դիմակները[43]:

Երկրորդ կարևոր արձագանքը մեղավորների հայտնաբերումն է: Այս փուլում տեղի են ունենում պիտակավորման և մեղավորների «բացահայտման ու պատժման» գործընթացներ: Այստեղ նպաստող գործոններ էին ոչ միայն բնակչության՝ իրավիճակի նկատմամբ անորոշությունը, այլ նաև պետական քաղաքականությունը: Պիտակավորման տեսությունները պնդում են, որ հայտնվելով նոր իրավիճակում, մարդիկ փորձում են ընկալել նոր տեղեկատվությունը կապելով նոր իրավիճակը իրենց իմացած նախորդ տեղեկատվության հետ[44]:

---

[42] Տե՛ս A. K. Donahue, How citizens and public officials perceive risk and preparedness, New York, 2011, էջ 5-6

[43] https://www.youtube.com/watch?v=74HmNM3decU, 11.07.2020, 19:00

[44] Տե՛ս E. Goffman, Frame Analysis. An Essay on the Organization of Experience, US, 1986, էջ 43-44

Պիտակավորումը ՀՀ-ում տեղի է ունենում երեք հիմնական ոլորտներում.

1. Տարածության պիտակավորում.

Որպես պիտակավորման հիմք կարող են հանդիսանալ հրապարակված ինքնամեկուսացված մարդկանց քարտեզը, ինչպես նաև հակահամաճարակային նորմերի խախտումներով լուսանկարների հրապարակումը: Մարդկանց գիտակցության մեջ այսպիսի տարածքները ֆրեյմավորովում են որպես վտանգավոր, վախ առաջացնող և կարող են հանգեցնել դրանց հանրային նշանակության կորստի:

2. Մարդկանց պիտակավորում.

Վարակված անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքների պիտակավորումը կարող է հանգեցնել խտրականության դրսևորումների[45]:

4. Խմբի պիտակավորում.

Կոլեկտիվ ինքնագնահատականի անկում, որի արդյունքում ձևավորվում են կոլեկտիվ կարծրատիպեր, օրինակ՝ «Հայերն անպատասխանատու են» :

Իրավիճակի այս տեսակ կառավարումը լեգիտիմացվում է կառավարության և հասարակության լայն խմբերի ներկայացուցիչների կողմից կոլեկտիվ ֆիզիկական գոյությունը պաշտպանելու դիսկուրսով, սակայն այստեղ տեսանելի են ռիսկեր, քանի որ իրավիճակային նորմալությունը հակված է դառնալ նորմատիվ:

Ուստի, կարևոր է, որպեսզի ճգնաժամը կառավարող մարմինները անընդհատ բացատրեն գոյություն ունեցող իրավիճակը և ներկայացնեն ապագայի որոշակի տեսլական: Կարևոր է նաև տեղեկատվության ամբողջականությունը, անհակասականությունը, իրավիճակի ամողջական պատկերի նկարագրությունը:

**Բուն ճգնաժամային փուլ-** (Տեղաշարժի սահմանափակումների վերացումից մինչև առողջապահական համակարգի գերծանրաբեռվածություն).

Նախորդ փուլում հաղորդակցական գործընթացի ոչ միանշանակությունը հանգեցրեց հասրակություն-կառավարություն վստահության և ներհասարակական վստահության կորստի: Այսպիսի պայմաններում ճգնաժամի ոչ ամբողջական գիտակցումը սկսեց ուղեկցվել կոնսպիրոլոգիաներով, ինչպիսիք են՝ «Դիմակը չի օգնում հաղթահարել համավարակը», «Բոլորին փորձում են չիպավորել» և այլն: Այսպիսի երևույթները պարտադիր կերպով խոչընդոտ են հանդիսանում ցանկացած հակաճգնաժամային կառավարման համար:

Շարունակական արտակարգ դրությունները, վարակի շատացող դեպքերը և պատվաստանյութի բացակայությունը բնական կերպով հիմք դարձան հասարակական ակնկալիքների **ֆրուստրացիայի**: Սա ակնհայտ դարձավ, երբ

[45] Տե՛ս հավելված 1

կառավարությունը հայտարարեց, որ «ստիպված ենք ապրել համավարակի հետ միասին»[46]: Մյուս կողմից, որպես զսպող գործոն հանդես էր գալիս վախը վարակվելու նկատմամբ: Արդեն մայիս ամսվա սկզբին ՀՀ առողջապահության նախարարը հայտարարեց, որ հիվանդանոցները հնարավոր է չկարողանան ընդունել բոլոր հիվանդներին[47]: Եվ իրոք, վախի և տագնապի գագաթնակետը կարելի է համարել առողջապահական համակարգի գերծանրաբեռնվածության շրջանը, երբ հիվանդանոցներում մահճակալային ֆոնդը թույլ չէր տալիս հոսպիտալացնել բոլոր կարիք ունեցողներին:

Այս հարցում պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ մեր երկրում համավարակը տարածվում է անավարտ պատերազմի պայմաններում: Հայ հասարակությունը մի կողմից՝ պայքարում է համավարակի դեմ, մյուս կողմից՝ զբաղված է Ադրբեջանի հետ լայնածավալ պատերազմի վերսկսման վտանգի չեզոքացմամբ, ինչի վկայությունն էր հուլիսյան դիմակայությունը ադրբեջանական ագրեսիային ՀՀ Տավուշի մարզի սահմանային գյուղերի ուղղությամբ: Այսինքն, առկա է մշտական լարվածություն, ինչը մեծապես ազդում է մարդկանց հոգեկան վիճակի վրա:

**Գիտակցման փուլ-** Հանրության կողմից ճգնաժամի ամբողջական գիտակցումը սկսվում է արտահայտվել վերարտադրվող ֆրուստրացիայի պայմաններում: Որպես հետևանք դիտարկվում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ակտիվացում, ներհասարակական վերահսկողության ձևավորում: Այս փուլը նախադրյալ է ստեղծում քաղաքացիների կողմից հակաճգնաժամային կանոնների պահպանման ընգրկվածության մեծացման համար, ինչպես նաև անհատների, խմբերի, տնտեսվարողների և այլ շահառուների ինքնակազմակերպման համար: Սկսվում են կարևորվել կանխատեսումները և հակահամաճարակային նոր ուղիների փնտրտուքը:

[46] Տե՛ս ՀՀ վարչապետի ուղերձ, https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2020/04/17/Nikol-Pashinyan-Speech/, 20.06.2020, 21:00
[47] https://168.am/2020/05/04/1298065.html, 04.06.2020, 13:00

## Եզրակացություն

Covid-19 համավարակով պայմանավորվածիրավիճակը Հայաստանի Հանրապետությունում աննախադեպ էր: Ինչպես և մյուս երկրները, Հայաստանը պատրաստված չէր այդպիսի արտակարգ իրավիճակի: Համավարակի տարածման հենց սկզբնական շրջանում արդեն ակնհայտ էին բազմաթիվ խնդիրներ պետական կառավարման և հասարակական տարբեր ոլորտներում: Համավարակի տարածումը կանխելու նպատակով ստորադասվեցին բազմաթիվ պրակտիկաներ և կարգավորումներ, որոնք էլ պարտադիր իրենց ազդեցությունը թողեցին Հայաստանի հասարակական կյանքի փոփոխությունների վրա:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս մեզ ախտորոշել մեր հասարակության ներկայիս վիճակը: Դիտարկել առաջացած նոր պրակտիկաները, որոնք ունեն նաև հետագայում պահպանվելու միտում: Հասարակությունում հիասթափության տարածումը բարոյահոգեբանական, հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կոնկրետ պայմանների հատևանք է, որում մենք հայտնվել ենք համավարակի պատճառով: Համավարակը ավելի դժվարացրեց ներհասարակական հաղորդակցության իրականացումը, շատ դեպքերում տեղափոխելով այն առցանց տիրույթ: Հայ հասարակությունը պիտի հաղթահարի ներքին հաղորդակցության անարդյունավետությունը:

Եվ քանի որ, վերջ ի վերջո, բոլոր հիմնախնդիրների լուծման հանգուցակետը համապատասխան ազգային ինքնություն ձևավորելու հետ է կապված, հարկ է առանձնապես շեշտել մեզանում քաղաքացիական հասարակության կայացման անհրաժեշտությունը: Հայ հասարակության տարբեր խմբեր, ներգրավվելով սոցիալական երկխոսության մեջ, պետք է մեծապես նպաստեն մեր երկրում սոցիալական վստահության մթնոլորտ և քաղաքացիական ինքնություն ձևավորելու գործընթացներին: Բայց մեզանում դեռևս չի ամրացել անհատականացման նոր բարոյականությունը, որն անհատական ընտրության ազատության քարոզչության հետ մեկտեղ մարդկանցից պահանջում է այդ ընտրության համար պատասխանատվություն կրել: Դրան հնարավոր է հասնել, եթե հայաստանյան քաղաքացիական հասարակությունը հանդես գա որպես սոցիալական երկխոսություն նախաձեռնող, ՁԼՄ–ների և կրթական հաստատությունների հետ միասին զբաղվեն բարոյական արժեքների դաստիարակմամբ:

Զարգացման հուսադրող հնարավորություններ ունեցող Հայաստանը բախվեց բարդ պայմանների, որոնք դանդաղեցրեցին և/կամ չեղարկեցին տարբեր դրական միտումներ: Մյուս կողմից էլ արդեն իսկ տնտեսական շրջափակման մեջ գտնվելով,

պարբերաբար սրվում է երկրի ռազմական-անվտանգային խնդիրները: Միայն այսպիսի իրավիճակից ձեռք բերված համապատասխան փորձը կարող է ապահովել ապագա կայունությունը և զարգացումը, պահպանելով Հայաստանի մասնակցությունը համաշխարհային նոր գործընթացներին:

**Հեղինակ՝ ս.գ.թ. Մկրտչյան Արեմ Արթուրի**

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Իշխանյան Ա., Ինքնորոշվա՞ծ քաղաքացիներ. քաղաքացիական ակտիվիզմի նոր ալիքը Հայաստանում // http://socioscope.am/archives/1128
2. Մ. Գալստյան, Ա. Մալխասյան, Գ. Հովակիմյան, Ա. Մելքոնյան, Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում Covid 19 համավարակի ժամանակահատվածում հանրային տրամադրությունների ուսումնասիրություն, 2020թ.
3. E. Durkheim, Die Regeln der soziologischen Methode, Fr./M, 1999
4. S. Raja, S. Leuca, More affordable and appealing internet services equals more people online, Worldbank, 2019
5. Human Rights Watch, Armenia: Law Restricts Privacy Amid COVID-19 Fight, Free Speech, April 2020
6. A. K. Donahue, How citizens and public officials perceive risk and preparedness, New York, 2011
7. E. Goffman, Frame Analysis. An Essay on the Organization of Experience, US, 1986

**Հավելված 1.**

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում անհայտ անձինք «հարձակվել են» կորոնավիրուսով վարակված քաղաքացու տան վրա, շրջել դարպասի մի հատվածը, իսկ պատերին գրել՝ «վարակակիրներ», «կորոնավիրուս», «վիրուսոտներ» և այլ բառեր:

**Հավելված 2.**

Սոցիալական ցանցերում տարածվող, ցեղասպանության 105-րդ տարելիցին նվիրված մեդիապատկերների դրսևորումների օրինակներ:

*Հավելված 3.*

**Տեղեկատվության աղբյուր հանդիսացող կայքերի և էլեկտրոնային փաստաթղթերի ցանկ**

**Լրատվական կայքեր**

1. www.a1plus.am
2. www.aravot.am
3. www.armeniasputnik.am
4. www.azatutyun.am
5. www.civilnet.am
6. www.facebook.com
7. www.hetq.am
8. www.iravaban.net
9. www.news.am
10. www.tert.am
11. www.youtube.com
12. www.168.am

**Պետական գերատեսչությունների, ՀԿ-ների պաշտոնական կայքեր**

1. www.armstat.am
2. www.competition.am
3. www.e-gov.am
4. www.gov.am
5. www.mfa.am
6. www.primeminister.am
7. www.redcross.am

## 2. Կորոնավիրուսի ազդեցությունը և հետևանքները ՀՀ տնտեսության վրա, դրանց վերացման կանխատեսումները

### Համաշխարհային տնտեսությունը կորոնավիրուսի ժամանակ

Covid-19 պանդեմիայի հետևանքով 2009-ից ի վեր ընթացող համաշխարհային տնտեսական վերելքը ընդհատվեց: Պանդեմիայի շրջանում պետությունների համար գերակա խնդիրն է վարակի տարածման կանխարգելումը , ինչի նպատակով իրականացվեցին մի շարք միջոցառումները՝ փակվեցին պետությունների սահմանները, սահմանափակվեց մարդկանց ազատ տեղաշարժման իրավունքը, ինչպես նաև տնտեսության որոշ ոլորտների գործունեությունը: Ըստ կիրառված սահմանափակումների խստության երկրները կարելի է դասել երեք խմբի: Առաջին խմբի երկրներում, ի դեմս Չինաստանի, կիրառվեցին կոշտ սահմանափակումներ՝արգելվեցին քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքը և ձեռնարկությունների գործունեությունը: Երկրորդ խմբի երկրները, որոնց ներկայացուցիչ է Շվեդիան և որոնց քանակը համեմատած ավելի քիչ է, հաշվեցին սահմանափակումները անօգուտ և խուսափեցին դրանցից: Եվ երրորդ խումբը, ԱՄՆ-ի օրինակով, իրականացրեց սահմանափակող միջոցառումներ, որոնք խիստ չէին: Սակայն անկախ կիրառված մոտեցումից և սահմանափակումների խստության աստիճանից , պանդեմիային ի հետևանք մարդկությունը առընչվեց համաշխարհային տնտեսական ճգնաժամին, որը իր չափերով համեմատելի է 1930-ական թվականների Մեծ դեպրեսիային:

Պանդեմիայի հենց առաջին ամիսներին գրանցվեց ձեռնարկությունների մասսայական անվճարունակություն, բարձր գործազրկություն, ընդհատվեց համաշխարհային մատակարարման շղթան և կրճատվեց համաշխարհային սպառումը: Սահմանափակումներից ամենաշատը տուժեցին ավիափոխադրողները, տուրիզմի ոլորտը, սպասարկումը և շինարարությունը: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ կառավարությունները, պանդեմիայի տնտեսության վրա թողած հետևանքները մեղմելու նպատակով , ձեռնամուխ եղան հետևյալ քայլերի՝

1. Իրականացվեց մակրոտնտեսության վիճակի գնահատում, բացահայտվեցին տնտեսության խոցելի ոլորտները, ինչպես նաև բնակչության խոցելի շերտերը:
2. Որոշվեց գործիքների և միջոցառումների ցանկ, որոնք կմեղմացնեն և կբալանսավորեն պանդեմիայի պատճառով առաջացած շոկը: Հակաշոկային գործիքները կարող են լինել ուղղակի և անուղղակի:
3. Հակաճգնաժամային գործիքների և միջոցառումների իրականացում
4.Գնահատվեց կիրառվող գործիքակազմի արդյունավետությունը, հարկ եղած դեպքում նրանց նոր գործիքներով փոխարինում:
5.. Պանդեմիայի երկրորդ ալիքի ի հայտ գալու հնարավորության կանխատեսում և եթե կա կարիքը , դրա հետ կապված առողջապահական և տնտեսական միջոցառումների նախապատրաստում:
6.. Պանդեմիայի ավարտից հետո տնտեսության վերականգմանը ուղված միջոցառումների իրականացում:

Միջազգային մի շարք կազմակերպություններ ներկայացրեցին իրենց կանխատեսումները համաշխարհային տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցության վերաբերյալ: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմկակերպությունը (OECD-ն) հրապարակեց սույն թվականի ապրիլին OECD-ի

երկրներում տնտեսական սահմանափակումներով պայմանավորված անկումների իր կանխատեսումը , համաձայն որի կանխատեսվում է 50% անկումներ շինարարության և մասնագիտական ծառայությունների ոլորտում, 75% մանրածախ առևտրի ոլորտում և 100% տրանսպորտային արդյունաբերության ոլորտում: Համաձայն OECD-ի վերլուծության ցանկացած լրացուցիչ ամիս տևող տնտեսական սահմանափակումները կարող են հանգեցնել ՀՆԱ-ի 1,5-2,5% տարեկան նվազման: Համաձայն Միջազգային աշխատանքի կազմակերպության աշխարհում 300մլն մարդ ճգնաժամի արդյունքում կառնչվի աշխատանքի կորստի հետ: Ավելի խոցելի են չգրանցված և ցածր որակավորում ունեցող աշխատողները:

Ըստ BIS միջազգային հաշվարկների բանկի կատարած կանխատեսման գլոբալ համախառն ներքին արտադրանքը կնվազի 5%-ով, 7-8% զարգացող երկրների պարագայում, իսկ զարգացածներում՝-6%-ով: Միևնույն ժամանակ Միջազգային արժույթային հիմնադրամը IMF 2020 թվականին կանխատեսում է գլոբալ տնտեսության կրճատումը 3%-ով:

Չնայած տնտեսությանը սպառնալիք վնասի վերաբերյալ մեծածավալ կանխատեսումների , տվյալ պահին նրանք կարճաժամկետ են և կրում են սպեկուլյատիվ բնույթ, ինչը կապված է համավարակի վերացման և դրա հետ կապված տնտեսական և ֆիզիկական սահմանափակումների վերացման ժամկետների անհայտ լինելու փաստի հետ:

Վիրուսով հարուցված ճգնաժամի դեմ ուղված պայքարի միջոցները համարյա բոլոր երկրներում միաբնույթ են: Դա կապված է նրա հետ, որ բոլոր երկների կառավարությունների առջև դրված է նույնատիպ խնդիր՝ պահպանելու նախորդ տարիների համեմատ ՀՆԱ-ի մակարդակը: Ինչպես հայտնի է , ՀՆԱ-ն բաղկացած է հետևյալ ցուցանիշներից՝ տնային տնտեսությունների սպառում, ներքին համախառն ներդրում, պետության կողմից ապրանքների և ծառայությունների սպառում և զուտ արտահանում:

GDP= C+I+G+(X-M)

C - տնային տնտեսությունների սպառում

I - ներքին համախառն ներդրում

G - պետության կողմից ապրանքների և ծառայությունների սպառում

X-M – զուտ արտահանում

ՀՆԱ-ի ամենամեծ բաղադրիչը տնային տնտեսությունների սպառումն է, որը կազմում է նրա մոտ 50-60%-ը: Պանդեմիայի պայմաններում սպառումը նվազել է երեք հիմնական պատճառով՝ աճող գործազրկության, արտասահմանից տրանսֆերների ներհոսքի կրճատման և ապագայի հետ կապված տնտեսությունում ձևավորված վատ սպասումով: Որոշ երկրներում նկատվում է անգամ բնակչության խնայողությունների աճ և սպառման մինչև 50% -ի նվազում: Արդյունքում պանդեմիայի ընթացքում անհնար է ապահովել ՀՆԱ-ի մակարդակը ի հաշիվ տնային տնտեսությունների սպառման աճի:

Ներքին համախառն ներդրումը համավարակի հետ կապված ունի նվազման միտում, քանի որ սպառման նվազման հետևանքով ընկնում է ընկերությունների արտադրանքի, ծառայությունների նկատմամբ պահանջարկը: Այս պարագայում ընկերությունները դիմում են իրենց ծախսերի և կապիտալ ներդրումների կրճատման՝ հիմնական նպատակ դիտարկելով բիզնեսի պահպանումը: Պետությունը փորձում է խրախուսել կապիտալ ներդրումները՝ այդ նպատակով տրամադրելով հատուկ ցածր

տոկոսներով վարկեր: Սակայն այդ փորձերը ապարդյուն են և ներքին համախառն ներդրումների հաշվին ՀՆԱ-ի աճը իրատեսական չէ:
Զուտ արտահանման ծավալները այս ճգնաժամի ընթացքում ավելացնել անհնարին է , հաշվի առնելով համաշխարհային տնտեսության սպառման նվազման մակարդակը և ընդհանուր սպառման շղթայի ընդհատումը: Սովորաբար այդ ժամանակ արտահանումը և ներմուծումը ունեն նվազման միտում:
Պետության կողմից ապրանքների և ծառայությունների սպառումը ըստ OECD-ի գնահատման կազմում է ԱՄՆ-ի ՀՆԱ-ի 35%,Եվրոմիության ՀՆԱ-ի 48% և Մեծ Բրիտանիայի 41%: Սա ՀՆԱ-ի երկրորդ որոշիչ բաղադրիչն է, որը կառավարվում է պետության կողմից և ճգնաժամի պարագայում ՀՆԱ-ի պահպանման միակ հնարավորություն է: Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ ՀՆԱ-ի պահպանումը հնարավոր է միայն պետության կողմից կապիտալ ծախսերի իրականացման շնորհիվ:
Ըստ էության պետության կողմից ապրամքների և ծառայությունների սպառումը հանդիսանում է հարկաբյուջետային խրախուսում: Հարկաբյուջետային խրախուսման շնորհիվ կառավարությունները փորձեցին հակակշռել պանդեմիայի հետևանքով առաջացած տնտեսական շոկը: Խոցելի խմբերում հայտնված տնտեսվարողների և ֆիզիկական անձանց պետբյուջեից ուղղակի և անուղղակի ֆինանսավորումը հետապնդում է տնտեսական և սոցիալական նպատակ, որն էր պահպանել տնտեսության համախառն պահանջարկը, հնարավորինս զերծ մնալ տնտեսվարողների անվճարունակությունից և աշխատատեղերի կրճատումից: Բյուջեից ուղղակի ֆինանսավորումը իրենից ներկայացնում է պետության կողմից վարկերի տրամադրում, տնտեսվարողների և տեղական իշխանությունների կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերումը: Որոշ երկրներում կիրառվեց նույնիսկ նույն ընկերությունների բաժնետոմսերի ձեռք բերումը:
Պանդեմիայի ընթացքում համաշխարհային պրակտիկայում դիտվել է կապիտալ ծախսերի իրականցման կտրուկ աճ: Այդ ծախսերը ուղվեցին այսպես կոչված ենթակառույցների բարելավման և ընդլայնման նախագծերի իրականացմանը:
Բյուջեից անուղղակի ֆինանսավորման միջոցով պետությունը որոշ տնտեսվարողների և ֆիզիկական անձանց համար հնարավոր դարձրեց հարկերի և տուրքերի վճարման հետաձգումը՝ հարկային արձակուրդը, և հարկերից ազատումը:
Ճգնաժամի հետևանքների չեզոքացման նպատակով կիրառվող հարկաբյուջետային խրախուսման ծավալը մի շարք երկրներում գերազանցում է ՀՆԱ-ի 10%-ը և շարունակում է աճել: Հաշվի առնելով, որ այս ամենին գումարվում է առողջապահական ոլորտին ուղված ֆինանսավորումը , ի հայտ է գալիս մեծ բյուջետային ճեղքվածք: Համաձայն Արժույթային միջազգայի հիմնադրամի(IMF) փորձագետների զարգացած երկրներում բյուջեի դեֆիցիտը կգերազանցի ՀՆԱ-ի 10%-ը: Այդ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով կառավարությունները որպես օրենք դիմում են արտաքին աղբյուրներին: 2020 թվականի մայիսին զարգացող երկրները IMF-ից վարկ ստանալու նպատակով ներկայացրել են երկու տրիլիոն դոլարի վարկային հայտ: Ի հետևանք ավելանալու է պարտք/ ՀՆԱ հարաբերությունը և ճգնաժամի ավարտին շատ երկրներում պարտքը կգերազանցի ՀՆԱ-ն: Սա բավական մեծ ցուցանիշ է, որը համեմատվում է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ի հայտ եկած ճգնաժամի արդյունքում ձևավորված պարտք/ ՀՆԱ հարաբերության հետ: Սակայն ի տարբերություն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գոյացած ճգնաժամի, երբ մի շարք պետությունների հաջողվեց

կարճ ժամանակահատվածում կրճատել պարտք/ՀՆԱ և բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերությունը, այս պարագայում դա հնարավոր չի լինի, քանզի այսօր չկա երկու կարևորագույն տնտեսությունները զարգացնող բաղադրիչ՝ աշխատանքային ուժի աճի պոտենցիալ և արտադրության արդյունավետության աճ: Պարտք/ ՀՆԱ հարաբերությունը կրճատել չի հաջողվի նաև հարկերի ավելացման միջոցով, քանի որ հարկերի ավելացումը չի նպաստի տնտեսության զարգացմանը և կառաջացնի սոցիալական և քաղաքական դժգոհություններ: Հաշվի առնելով վարկային ռեսուրսների տոկոսների և գնաճի ցածր մակարդակը՝ տնտեսություններում դեռ երկար ժամանակ կպահպանվի պարտք/ ՀՆԱ և բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ բարձր ցուցանիշը: Որպես բյուջեի դեֆիցիտի նվազման աղբյուր կառավարությունները դիտարկում են նաև պետական գույքի վաճառքից գոյացած միջոցները:




*Աղբյուրը BCA ընկերության կողմից իրականացված հետազոտություն*

Ինչպես բոլոր ճգնաժամերի, այնպես էլ Covid-19-ով պայմանավորված ճգնաժամի ընթացքում կարևոր է պահպանել և ապահովել ֆինանսական շուկայի կայունությունը: Այս պարտականությունը ստանձնեցին ազգային կենտրոնական բանկերը, որոնք համակարգը ապահոցեին համապատասխան իրացվելիությունով, իջեցրեցին վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

Հաշվի առնելով ճգնաժամի բացասական ազդեցությունները՝ ֆինանսական շուկաները կարգավորող լիազոր ազգային մարմինները հետաձգեցին BASEL-3-ով նախատեսված կապիտալի ադեկվատության և իրացվելիության նորմատիվների ներդրումը: Որոշ երկրներում կապիտալի ադեկվատության նորմատիվի մեծությունը նույնիսկ իջեցվեց 1-2% –ով: Օրական ռեժիմով մոնիտորինգի ենթարկվեց առևտրային բանկերի չաշխատող վարկի ցուցանիշների շարժը: Մի շարք կարգավորողներ անգամ սահմանեցին պանդեմիայի պայմաններում առևտրային բանկերի գործունեության ուղեցույց, սահմանափակեցին բանկերի կողմից

շահաբաժինների վճարումը և իրականացրեցին տնտեսվարողների ուղղակի վարկավորում:
Ճգնաժամի ազդեցությունը նվազեցնելու նպատակով շատ երկրների կառավարությունները հարկաբյուջետային և դրամավարկային գործիքներից բացի կիռառում են նաև վճարումների հետաձգման և ժամանակավոր հսկողության միջոցներ: Մինչև տնտեսական գործունեության սահմանափակումների ավարտը հայտարարվեց վճարումների արձակուրդ վարկերի սպասարկման, ինչպես նաև որոշ դեպքերում անշարժ գույքի վարձակալության վճարումների համար: Արձակուրդը կիռարվեց սահմանափակումների ընթացքում հաշվարկված կոմունալ ծառայությունների համար, իսկ մի շարք երկրներում այդ կոմունալ ծառայությունների վճարները փոխատուցվեցին պետության կողմից:
Կառավարության կողմից սահմանվեց ժամանակավոր հսկողություն բժշկական, պարենային ապրանքների գների և որոշակի ռազմական նշանակություն ունեցող ապրանքների արտահանման նկատմամբ:
Հաշվի առնելով ճգնաժամի բացասական ազդեցությունը տնտեսության վրա՝ մի շարք երկներում հետաձգվեց ընկերությունների սննկացման գործընթացը: Օրինակ ՝ Ֆրանսիայում սննկացման հինք հանդիսացող պարտավորություններ չկատարելու 45 օրվա ժամկետը երկարաձգվեց մինչև 90 օրը: Գերմանիայի օրենսդիր մարմինը հետաձգեց ընկերությունների անվճարունակության գործընթացը մինչև 2020 թվականի սեպտեմբեր՝ հնարավորություն տալով երկարձգել այդ ժամկետը մինչև 2021 հունվարի 1:




Աղբյուրը EBRD, IMF, WORLD BANK: Հաշվարկը իրականացվել է միջին եկամուտ ունեցող 38 երկրների օրինակով

Չնայած կառավարությունների կողմից իրականացվում են անհրաժեշտ միջոցառումներ, տնտեսության աշխուժացման սկիզբը կարող է ազդարարել միայն պանդեմիայի ավարտը կամ վարակվածների թվի կտրուկ նվազումը: Մեկ տարվա ընթացքում կարձանագրվի գործազրկության աճ, զրոյական կամ բասացական տոկոսադրույք, շատ ցածր գնաճ և հնարավոր է գնանկում: Դրանից հետո կպահանջվի մոտ երեք տարի տնտեսության վերականգման համար: Հնարավոր է այդ ընթացքում տնտեսության վիճակը  մի շարք երկրներում հանգեցնի քաղաքական անկայունությունների: Արդեն այսօր ըստ The Economist պարբերականի 43 երկրներում տիրում է պանդեմիայի հետևանքով ի հայտ եկած քաղաքական անկայունություն:
Ճգնաժամը հնարավորություն ունեն նվազագույն կորստով հաղթահարել այն երկրները, որոնք մինչ պանդեմիան ունեցել են լավ մակրոտնտեսական պայմաններ: Այդ պայմաններն են նախնական ցածր բյուջեի դեֆիցիտ և ՀՆԱ-ի նկատմամբ փոքր արտաքին պետական պարտք: Ճգնաժամի հաղթահարման կարևոր նախապայմաններից է նաև առողջապահության արդյունավետ համակարգի առկայությունը, որը բնորոշվում է առողջապահական զարգացած ենթակառուցվածքների առկայությամբ և պետբյուջեից առողջապահության ֆինանսավորման չափով: Տնտեսության խոցելիությունը պայմանավորված է նրա կախվածությունից տուրիզմից ստացված եկամուտներից և արտաքին դրամական փոխանցումների ներհոսքից: Մեծ ազդեցություն ունի նաև ճգնաժամի հաղթահարման մեջ պետության կառավարման որակը, որը իրենից ներկայացնում է արագ որոշումներ կայացնելու ունակությունը, քաղաքական կայունության մակարդակը և կոռուպցիայի չափը:

**Կորոնավիրուսի ազդեցությունը** և **հետևանքները ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների վրա: ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները**
**Տնտեսական իրավիճակ** և **ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումներ**
Կորոնավիրուսի տարածումը կախարգելելու նպատակով՝ ՀՀ կառավարությունը մարտի 16-ին որոշում կայացրեց  երկրում  արտակարգ դրություն մտցնելու վերաբերյալ : Այս որոշման համաձայն ի շարք այլ միջոցառումների սահմանափակվեցին տնտեսական գործունեության առանձին տեսակների և ծառայությունների մատուցումը, ՀՀ-ից ապրանքների փոխադրումը, տրանսպորտային միջոցների տեղաշարժը, ինչպես նաև անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը: Կառավարության կողմից հայտարարված արտակարգ դրությունը երկականգվել է երկու անգամ և մինչ այսօր էլ մեղմացված սահմանափակումների ռեժիմով գործում է:  Հիվանդության արագ տարածումը և կիրառվող սահմանափակումները հանգեցրեցին տնտեսական կանգի, որի հետևանքով ՀՀ-ն թևակոխեց խորը ճգնաժամի ժամանակահատված:
Հիվանդության և սահմանափակումների հետևանքով ՀՀ-ում տնտեսվարող սուբյեկտների արտադրված ապրանքների, մատակարարվող ծառայությունների պահանջարկը ընկավ 50% –ով:  Ըստ փորձագետների հայկական ընկերությունները ապրիլի 10-ի դրությամբ ունեին  իրենց անհրաժեշտ և անհետաձգելի ծախսերի սպասարկելու համար մեկ ու կես ամսվա կանխիկ միջոց:

Մեծ բացասական ազդեցություն ՀՀ տնտեսության վրա կունենա արտերկրից տրանսֆերների ծավալի և տուրիզմից ստացված արտարժույթային մուտքերի կրճատումը: Հայաստան արտերկրից տրանսֆերների ներհոսը 2020 թվ. կկրճատվի 30-40%-ով , տուրիզմից մուտքերը՝ 70-90 % ով:
2020թվականի առաջին հինգ ամսվա ընթացքում ֆիզիկական անձինք արտերկրից բանկերի միջոցով Հայաստան են փոխանցել 546մլն USD-ին համարժեք գումար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս գումարը կրճատվել է 158 մլնUSD-ով կամ 22,5%-ով: Ամենաշատը նվազել են Ռուսաստանից Հայաստան դրամային փոխանցումները՝ 31%-ով, իսկ ֆիզիկական անձանց փոխանցումների զուտ ներհոսքը 2020 թվ. առաջին հինգ ամիսների ընթացքում 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել է 44.6մլն USD կամ 23%–ով: Սույն թվականի մարտ,ապրիլ, մայիս ամիսների ընթացքում ֆիզիկական անձինք արտերկրից Հայաստան բանկերի միջոցով փոխանցել են 310 մլն դոլար, որը անցած տարվա նույն ժամանակահաատվածի համեմատ կրճատվել է 30.3 %-ով: Ընդ որում Ռուսաստանից Հայսատան դրամական փոխանցումները կրճատվել են 43%-ով: Սա բացատրվում է նրանով, որ մարտի կեսից պետական սահմանների փակ լինելու պատճառով արտագնա աշխատողների մեծամասնությունը չի կարողացել մեկնել ՌԴ:
Այս տարվա մայիսին ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների համաձայն Հայաստանում ապրանքների արտահանումը և ներկրումը 2019 մայիսի նկատմամբ նվազել է համապատասխանաբար 8.7% և 11.8%-ով: Իսկ 2020թվականի առաջին հինգ ամսվա ընթացքում 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ արտահանումը կրճատվել է 8.1%-ով, իսկ ներմուծումը 12.8%-ով: Այդ ընթացքում ավելացել է հանքահումքային արտադրանքի արտահանումը 19%-ով և նվազել է ոսկերչական իրերի արտահանումը 31%–ով: Ինչ վերաբերվում է ներմուծված ապրանքներին, արտերկրից ներմուծվել է 16,5%-ով ավել պատրաստի սննդի արտադրանք և 59,2%-ով քիչ տրանսպորտային միջոց:
Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հրապարակած տվյալների մարտի 1-ից մինչև մայիսի 31ը իրենց գործունեությունն են ժամանակավորապես դադարեցրել 5873 կազմակերպություն և անհատ ձեռներեց: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրացել է 41% աճ: 2020 թվականի ապրիլին ՀՀ-ում պանդեմիայի հետևանքով կիռարված սահմանափակումների պատճառով կրճատվել է 71.4 հազար աշխատատեղ, իսկ մայիս ամսին սահմանափակումների մեղմացման նպատակով վերականգնվել է դրանցից 50 հազարը:
Կորոնավիրուսի բացասական հետևանքները չեզոքացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 21 հակաճգնաժամային միջոցառում: Այդ միջոցառումներից 9-ը կրում են տնտեսական բնույթ, իսկ մնացածը՝ սոցիալական: Տնտեսական միջոցառումները ուղված են տարբեր նպատակների և հասցեատերերի: Գումարները օգտատերերին հատկացվում են համաֆինանսավորման, վերաֆինանսավորման, սուբսիդավորման, վարկավորման, դրամաշնորհի, միանվագ աջակցության և երաշխիքների տրամադրման տեսքով: Հակաճգնաժամային միջոցառումները հասանելի են տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի միկրո և միջին չափի ձեռնարկություններին: Այս ծրագրերի շրջանակում մեծ տեղ է հատկացվել հատկապես գյուղատնտեսության և բարձր տեխնոլոգիաների ոլորտին: Աջակցությանը կարող են դիմել անգամ ստարթափերը: Օժանդակություններից

անմասն չեն մնացել 2-50, հետագայում 2-ից 100 աշխատակից ունեցող ռեզիդենտ տնտեսվարողները, որոնք կարող են ստանալ միանվագ դրամաշնորհ ամեն 5–րդ աշխատողի աշխատավարձի չափով: Միկրոձեռնարկատիրությանը ցուցաբերած օժանդակության չափը կազմում է 2020 թ առաջին եռամսյակի ընթացքում մատուցված ծառայությունների, մատակարարված ապրանքների և կատարված աշխատանքների իրացման շրջանառության 10%-ը, բայց չի գերազանցում նվազագույն աշխատավարձի կրկնապատիկը:
Պետությունը կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերը իրականցնում է բանկերի, վարկային կազմկերպություններ,ՊԵԿ-ի (Պետական եկամուտների կոմիտեի) և Էկոնոմիկայի նախարարության ներդրումների աջակցման կենտրոնի միջոցով:
Չեզոքացման ծրագրերի մեջ ամենամեծ մասը կազմում է տնտեսվարող սուբյեկտների վարկավորումը, որի ծավալները մայիսի 15-ի դրությամբ կազմել են 50 մլդ AMD : Տնտեսվարողներին առաջարկվում են 3մլն AMD - 250 մլն AMD մեծությամբ և 6 ամսից մինչև 5 տարի ժամկետով վարկեր:
Կորոնավիրուսի հետևանքները չեզոքացնող սոցիալական 12 ծրագրերի իրականացման համար մայիսի 15-ի դրությամբ օգտագործվել է 21.209 մլդ դրամ: Բացի սոցիալական ասպեկտներից այս ծրագրերը նպատակ ունեն հանրապետությունում համախառն պահանջարկի ավելացմանը և դրա հետևանքով տնտեսության աշխուժացմանը:
Այս երկու ծրագրերին զուգահեռ իրականացվում է նաև վարակի տարածումը կանխարգելման նպատակով առողջապահության ինտենսիվ ֆինանսավորում: Առողջապահության ֆինանսավորման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 20%–ով: Նախորդ տարվա համեմատ նաև մոտ 14%-ով ավելացել է սոցիալական պաշտպանությանը ուղված ֆինանսավորումը:
Հաշվի առնելով ճգնաժամը մեղմացնող միջոցառումների ծավալը և ստեղծված իրավիճակը, ինչպես նաև կանխատեսվող պետբյուջեի ապագա ցածր մուտքերը՝ ՀՀ կառավարությունը ստիպված կլինի ավելացնել պետբյուջեի դեֆիցիտը: Դեֆիցիտի չափը որոշվելու է պանդեմիայի և տնտեսական սահմափակումների վերացման և տնտեսության վերականգնման ժամկետներով: Բյուջեի ճեղքվածքը փակելու նպատակով կառավարությունը ստիպված կլինի գումար ներգրավել արտերկրի ֆինանսական շուկայից, մասնավորապես միջազգային զարգացման կառույցներից:
18.05.20-ին IMF արժույթային միջազգային հիմնադրամի խորհուրդը հաստատել է Հայաստանին 280 մլն USD վարկ տրամադրելը COVID-19 պանդեմիայի հետևանքով առաջացած կարճաժամկետ ռիսկերի կրճատման և մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով: Համաշխարհային բանկը հայտարել է ՀՀ ճանապարհների վարականգնմանը ուղված 69 մլն USD ծավալով ծրագրի իրականացման մասին:

**Իրական հատված**

**Առևտուր**

Կորոնավիրուսի հետևանքով նախորդ տարվա մարտ, ապրիլ, մայիս ամիսների համեմատ առևտուրը նվազել է համապատասխանաբար 9,9%, 33,1% և 18.4%-ով: Չնայած նվազման, մայիս ամսին գրանցվել է առևտրի ծավալների աճ ապրիլ ամսվա համեմատ 33.3%–ով:

Պամդեմիայի հետևանքով ամբողջ աշխարհում, այդ թվում Հայաստանում, ամենաշատը տուժել են ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների վաճառքով զբաղվող խանութները, նրանց տեխնիկական սպասարկմամբ և նորոգմամբ զբաղվող ընկերությունները: Նրանցում առևտրի նվազումը կազմում է նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 30,3% :

Մարտի 16-ից մինչև մայիսի 4-ը մանրածախ առևտրի կետերը, բացառությամբ սննդի առևտրով զբաղվող խանութները, փակ էին: Սրա հետևանքով մանրածախ առևտրի ծավալները 2020թվ հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա համեմատ նվազեցին 13,4%-ով: Որպես արդյունք մեծածախ առևտրի ծավալները 2020թվ. սկզբից մինչև մայիսը նախորդ տարվա համեմատ նվազեց 8,1%–ով: Պանդեմիայի հետևանքով բնակչության մոտ ձևավորված ապագայի նկատմամբ անորոշության զգացման պատճառով նվազել է պահանջարկը անգամ առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների նկատմամբ:

Շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ վաճառքի ծավալները այս տարվա ապրիլին նախորդ տարվա համեմատ կրկնակի նվազել են: Մայիսին վառելիքի վաճառքի ծավալների 36,6% աճ նկատվեց, սակայն այն անցած տարվա նույն ամսվա նկատմաբ 25,3%-ով քիչ է: Բացի դրանից փոխվեց վառելիքի վաճառքների մասնաբաժինը. հեղուկ գազի գների կտրուկ աճի պատճառով նվազեց նրա վաճառքը, իսկ բենզինինը՝ ավելացավ:

Հետաքրքիր է դիտարկել պանդեմիայի ազդեցությունը հայկական շուկայի համար ավանդական երկու ապրանքների՝ սուրճի և ծխախոտի, սպառման վրա: Մինչ այսօր բոլոր ճգնաժամերի ընթացքում նրանց սպառումը ավանդաբար ավելացել է մոտավորապես 10-15% -ով: Այս փաստը բացատրվում է նրանով, որ մարդիկ սթրեսային և դժվար իրավիճակներում, կրճատելով այլ ապրանքների սպառումը, իրենց խնդիրները քննարկում էին սուրճ ըմպելով և ծխելով: Այս ճգնաժամի ընթացքում, հաշվի առնելով ռեստորանների և սրճարանների գործունեության սահմանափակումները, սոցիալական հեռավորություն պահպանելու անհրաժեշտությունը և բնակչության եկամուտների կտրուկ անկումը, 2020թվ. սկզբից մինչև մայիսը նախորդ տարվա համեմատ ծխախոտի և սուրճի մանրածախ առևտուրը կրճատվել է համապատասխանաբար 15% և 20%-ով:

Պանդեմիայի ընթացքում զարգացան և նոր նշանակություն ձեռք բերեցին հեռահար վաճառքի միջոցները: Մանրածախ առևտրով զբաղվող ընկերությունները ներդրեցին նոր և զարգացրեցին գործող հեռահար վաճառքի գործիքները: 2020թվ. սկզբից մինչև մայիսը հեռահար վաճառքի ծավալը աճեց 40%–ով: Դրան զուգահեռ զարգացավ հեռահար ձեռք բերված ապրանքների առաքման ծառայությունը:

ՀՀ կառավարության կողմից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրի առաջին միջոցառման ընթացքում հունիսի վերջի դրությամբ վարկավորվել է առևտրի ոլորտի 74 ընկերություն ընդհանուր 500մլն դրամի չափով:

**Արդյունաբերություն**

2020 թվ. մարտ և ապրիլ ամիսներին պանդեմիայի հետևանքով նվազել են արդյունաբերական արտանդրանքի ծավալները նախորդ ամիսների համեմատ համապատասխանաբար 2% և 9.2%-ով : Մայիսին նույն թվականի ապրիլի նկատմամբ նկատվել է աճ 11,9%–ով, սակայն ի համեմատ 2019 թվ մայիսի

արդյունաբերական ծավալներում այնուամենայնիվ գրանցվել է անկում 3.9%–ով: 2020թվ. սկզբից մինչև մայիսը ընդհանուր առմամբ արդյունաբերական ծավալները աճել են 2,4% –ով: Աճը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերական ոլորտով: Այս ենթաճյուղում աճը 2020 թվ. սկզբից մինչև մայիսը կազմել է 25,7%, իսկ 2020 թվ մայիսին 2019 թվ-ի նույն ժամանակահատվածի համեմատ 9,9%: Այն հիմնականում պայմանավորված է միջազգային հումքի շուկաներում մարտի վերջից դոլլարի արժեզրկման հետևանքով պղնձի գների բարձրացմամբ:

Կորոնավիրուսի հետևանքով կտրուկ ավելացավ պահանջարկը քիմիական ախտահանիչ նյութերի և որոշ դեղամիջոցների նկատմամբ: Որպես արդյունք 2020 թվ. սկզբից մինչև մայիսը աճեց քիմիական նյութերի և դեղագործական արտանդրանքը համապատասխանաբար 17% և 18%- ով:

Համաշխարհային զարգացումներին համահունչ 2020 թվականի սկզբից կտրուկ նվազել են համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրությունների ծավալները՝ 33,2% և 24,1%-ով:

Կորոնավիրուսի հետևանքները մեղմացնելու նպատակով կիրառվող սահմանափակումները, ինչպես նաև ներքին շուկայի պահանջարկի նվազումը, բացասական են անդրադարձել նաև խմիչքի, ծխախոտի և սննդամթերքի արտադրության ծավալների վրա: Նվազել են նաև թեթև արդյոևնաբերության արտադրական ծավալները:

Վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն նախորդ տարվա հինգ ամիսների համեմատ կոնյակի արտադրությունը նվազեց 14,9%-ով , իսկ խաղողի գինունը՝ 15,3%–ով: Այս անկումը պայմանավորված է ոչ միայն վերոնշյալ ապրանքների արտերկիր արտահանման ծավալների նվազմամբ, այլ նաև ներքին պահանջարկի անկմամբ:

Պանդեմիայից ամենաշատը տուժել են արդյունաբերության ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունները: ՀՀ կառավարության կորոնավիրուսի տնտեսական հետևանքները չեզոքազման երրորդ միջոցառման ներքո ոլորտի փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրվել է արտոնյալ պայմաններով 3,69 մլն դրամի 327 վարկ:

**Ծառայություններ**

Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների ծառայությունների ծավալը 2020 թվ. սկզբից մինչև մայիսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 4,2%–ով: Ամենամեծ անկումը արձանագրվել է կացության և հանրային սննդի ենթաոլորտներում: 2020 թվ. սկզբից մինչև մայիսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անկումը կազմել է 34,9% , իսկ այս տարվա մայիսին նախորդի համեմատ 69,2%: Այս անկումը պայմանավորված է գրեթե երկու ամիս գործող կացության և հանրային սննդի կազմակերպմամբ զբաղվող ընկերությունների գործունեության սահմանափակումով, իսկ դրանից հետո սոցիալական հեռավորության պահպանման պահանջի ներդրումով: Պետք է նշել, որ սոցիալական հեռավորության պահպանման պահանջը համարյա կրկնապատկել է ծառայությունների արժեքը: ՀՀ կառավարության կորոնավիրուսի տնտեսական հետևանքները չեզոքազման երրորդ միջոցառման ներքո կացության և հանրային

սննդի ոլորտի փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրվել է արտոնյալ պայմաններով 2.16մլդ դրամի 222վարկ:

**Շինարարություն, անշարժ գույքի շուկա**

Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների 2020 թվ.առաջին հինգ ամիսների ընթացքում Հայաստանում իրականացվել է 77,462 մլդ դրամի շինարարություն: Դա 23,4%-ով քիչ է 2019 թվ նույն ժամանակահատվածում կատարված շինարարության ծավալների համեմատ: Ծավալների անկման պատճառները սկզբում պանդեմիայի բացասական հետևանքները մեզմացնող սահմանափակումներն էին, իսկ հիմա անշարժ գույքի շուկայի և տնտեսության վերաբերյալ ձևավորված բացասական սպասումները: Բացասական սպասումները էլ ավելի ամրապնդվեցին հունիսին ՀՀ Ազգային ժողովում հարկային օրենսգրքի փոփոխություններին և լրացումներին վերաբերվող օրենքի ընդունումը, ըստ որի ներդրվեց անշարժ գույքի հարկման նոր համակարգ: Համաձայն նոր համակարգի գույքի հարկման համար կադաստրային արժեքի փոխարեն հիմք է հանդիսանալու շուկայական արժեքը, սահմանվել են հարկման բազայի նոր սանդղակներ, որոշ գույքային միավորների համար նաև նոր դրույքաչափեր, վերացվել է բնակարանների և բնակելի տների չհարկման շեմը: Ըստ ՀՀ կառավարության նոր օրենքը կավելացնի համայնքային բյուջեի եկամուտը և անշարժ գույք/ ՀՆԱ ցուցանիշը 0,2-ից կհասցվի 1,5%: Հարկման բեռի կտրուկ աճը կանխելու նպատակով հարկման նոր համակարգին անցումը կիրականացվի 2021 թվ. հունվարի 1–ից 6 տարիների ընթացքում: Օրենքն ընդունելիս Ազգային Ժողովը հաշվի չառավ երկրում տիրող տնտեսական ծանր իրավիճակը, միջին ամսեկան աշխատավարձի մակարդակը և պանդեմիայի ազդեցությունը անշարժ գույքի շուկայի վրա: Ի հետևանք այս փոփոխությունների Հայաստանում կփոխվի անշարժ գույքի պահանջարկի կառուցվածքը, կնվազի հետաքրքրությունը թանկ սեգմենտի բնակարանների, բնակելի տների և կոմերցիոն տարածքների նկատմամբ: Հայկական անշարժ գույքը կկորցնի օտարերկյա քաղաքացիների համար իր ներդրումային գրավչությունը: Որպես հետևանք տեղի կունենա անշարժ գույքի գների ճշգրտում: Անշարժ գույքի շուկայում ներկայումս դիտվում է սպասողական իրավիճակ նվազագույնս իրականացվող առքուվաճառքի գործարքներով: Չնայած այս ամենի շուկայում պահպանվում են կորոնավիրուսից առաջ ձևավորված անշարժ գույքի գները:

2020 թվականի մայիսին անշարժ գույքի գործարքների քանակը նախորդ տարվա 4200- ի փոխարեն կազմել է 2925: Նույն ժամանակահատվածում օտարերկյա քաղաքացիները ՀՀ-ում գնել են 59 և վաճառել 130 գույք: Այս փաստը կարող է վկայել, որ օտարերկրացիները կորցնում են հետաքրքրությունը հայաստանյան անշարժ գույքի նկատմամբ:

Շինարանության ծավալները կրճատվել են ուղղակիորեն անշարժ գույքի շուկայում գների անորոշության պատճառով: Գների կայունացման նպատակով անհրաժեշտ է ձևավորել լրացուցիչ պահանջարկ: Դա կարելի է իրականացնել արտոնյալ հիպոթեկային վարկերի տրամադրման, եկամտային հարկերի նվազեցման և պետության անմիջական պատվիրատու հանդիսանալու միջոցով:

ՀՀ կառավարության կորոնավիրուսի տնտեսական հետևանքները չեզոքազման երրորդ միջոցառման ներքո շինարարության ոլորտի փոքր և միջին

ձեռնարկություններին տրամադրվել է արտոնյալ պայմաններով 1.17մլդ դրամի 69 վարկ

**Զբոսաշրջություն**

Ամբողջ աշխարհում պանդեմիայի հետևանքով ամենաշատը տնտեսության ճյուղերից տուժել է զբոսաշրջությունը: Այս ոլորտը կախված է ոչ միայն երկրի ներսում, այլ նաև ամբողջ աշխարհում պանդեմիայի տարածման մակարդակից: Համաձայն Համաշխարհային տուրիստական ֆորումի զբոսաշրջությունը ամբողջ աշխարհում կկրի մեկ տրիլիոն դոլլարի վնաս 2020 թվականին: Աշխարհով մեկ այս ոլորտում աշխատող 50մլն մարդ կարող է բախվել գործազրկությանը: Հայաստանում զբոսաշրջությունն էլ անմաս չի մնացել վնասներից: Այս տարվա առաջին եռամսյակում Հայաստանում գրանցվել է ներգնա զբոսաշրջության 311 հազար այցելու նախորդ տարվա 364 հազարի փոխարեն, որը 14,6 %-ով քիչ է: Մարտի կեսերից ՀՀ սահմանները փակվեցին և ըստ էության զբոսաշրջությունը կանգ առավ և սկսեց կրել վնասներ: Առաջին կիսամյակում ոլորտի վնասի հաշվարկման համար հիմք է հանդիսանում 2019թվ հունիսի 30-ին ՀՀ –ում գրանցված 770 հազար ներգնա զբոսաշրջային այցելությունները: Այսինքն Հայաստանում առաջին կիսամյակում 459 հազար ներգնա զբոսաշրջային այցելություն ավելի քիչ է եղել: Ըստ Տուրիզմի հայկական ֆեդերացիայի հետազոտության մեկ զբոսաշրջիկի կողմից Հայաստանում ծախսված գումարը կազմում է մոտ 800 դոլլար: Նշանակւում է որ միայն ներքին զբոսաշրջության ոլորտի կորուստը կազմում է 459X800, կամ 367.200 մլն դոլլար: Եթե կորոնավիրուսի հետ կապված իրավիճակը հանրապետությունում և դրա սահմանափակումներից դուրս մինչև տարվա վերջ չլավանա, ապա զբոսաշրջության ոլորտի վնասը կարող է գերազանցել մեկ մլրդ դոլլարը:

Համաձայն մասնագետների հաշվարկների զբոսաշրջության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կնվազի 5%–ով ոլորտի մինչև սեպտեմբեր վերականգնման պարագայում և 8% ,եթե վերակագնումը լինի դեկտեմբերին: Զբոսաշրջության վերականգնումը կնպաստի ծառայությունների, առևտրի, գյուղատնտեսության, ինչպես նաև արդյունաբերության որոշակի ենթաճյուղերի զարգացմանը:

ՀՀ կառավարությունը զբոսաշրջության ոլորտի աջակցման համար հատուկ տնտեսական ծրագրեր չի իրականացրել, սակայն կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի քսաններորդ միջոցառումը ուղված է նաև զբոսաշրջության ոլորտի աշխատակիցներին: Ընդհանուր առմամբ մինչև 30.06.20 ՀՀ կառավարությունը կորոնավիրուսի տնտեսական հետևանքները չեզոքացման ծրագրերի շրջանակում զբոսաշրջության ոլորտի 351 ընկերության տրամադրել է 12.450 մլրդ դրամի վարկ: Մոնեն և Զեգարան մշակեցին զբոսաշրջության կախվախության ինդեքսը պետությունների համար, որը ցույց է տալիս ճգնաժամի ազդեցությունը երկրի զբեսաշրջության վրա: Հայաստանի ինդեքսը կազմում է18,6 : Սա մեծ ցուցանիշ է համեմատ այլ երկրների, որոնց մեծամասնությունում ինդեքսը չի գերազանցում 10–ը:




*Տվյալները հավաքագրված են Հ. Մոնեի և Մ. Չեգարայի կողմից*

**Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսությունը կորոնավիրուսից ամենաքիչ տուժած ոլորտն է, քանի որ չկան որևէ սահմանափակումներ գյուղատնտեսական աշխատանքներին վերաբերող և սոցիալական հեռավորություն պահպանելու պահանջը չի խոչնդոտում գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը և էականորեն չի ազդում գյուղմթերքի գների վրա: ՀՀ-ում գյուղատնտեսությունը ցածր արդյունավետության և բնակլիմայական պայմաններից խորը կախվածություն ունեցող ճյուղ է: Այս տարվա եղանակային պայմաններից ելնելով՝ նվազել է որոշ գյուղմթերքի ծավալը, որը բերել է իր հերթին գնաճի: Օրինակ՝ այս տարի ծիրանի գինը մոտ երեք անգամ ավել է անցած տարվա գնից, իսկ խնձորինը ՝ երկու անգամ: Բարձր գների շնորհիվ գյուղատնտեսությամբ զբաղվողները կարողացել են ստանալ շահույթ:

Համաձայն ՀՀ Էկոնոմիկային նախարարության արված հայտարարության պտուղ-բանջարեղենի արտահանումը 2020թվ. հունիսին 2019-ի համեմատ նվազել է 15%-ով: Մասնավորապես այս տարվա հունիսին արտահանվել է 5500տ խնձոր անցած տարվա 11500 տ-ի փոխարեն: Նույն է իրավիճակը ծիրանի արտահանման հետ կապված, որտեղ նախորդ տարվա համեմատ արձանագրվել է 3000 տ-ի անկում:

,,Ոչ սեզոնային ՛՛ բանջարեղենի՝ լոլիկի և վարունգի գները 2020թվ հունիսին 2019–ի համեմատ նվազել են համապատասխանաբար 15% և 9%-ով: Նվազումը պայմանավորված է այս երկու բանջարեղենի նկատմամբ ներքին պահանջարկի

կրճատմամբ, որի պատճառն էր ռեստորանների և սրճարանների գործունեության սահմանափակումները:
Հաշվի առնելով կորոնավիուսի ազդեցությունը հայկական գինու, կոնյակի արտադրանքի վրա՝ անհայտ է այս տարվա աշնանը խաղողի մթերման գործընթացի արդյունքերը:
Համաձայն ՀՀ ԿԲ տվյալների կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերի ներքո գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել է 16.200 վարկ տոկոսադրույքների սուբսիդավորման ընդհանուր 23 մլդ դրամ ծավալով: Ընդհանուր առմամբ 08.07.20-ի դրությամբ պետական օժանդակության ծրագրերով գյուղատնտեսությանը տրամադրվել է 18.000 վարկ 37 մլրդ դրամ ծավալով: Այս ցուցանիշը մոտ երեք անգամ գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տրամադրած վարկերին:

**Բանկային համակարգ**

Ճգնաժամի հետևանքները մեղմացնելու նպատակով ՀՀ Կենտրոնական բանկը մարտից սկսեց իրականացնել դրամավարկային հեշտացման ,,monetory easing'' և ֆինանսական շուկայի կայունությունը ապահովող միջոցառումներ: Տնտեսությունը աշխուժացնելու նպատակով մարտի 17-ի, ապրիլի 28-ին և հունիսի 20-ին կայացած Կենտրոնական բանկի խորհուրդի նիստերի արդյունքում նվազեցվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը համապատասխանաբար 0,25%, 0,25% , 0,5% –ով: Արդյունքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը նշված ժամկետում նվազեց 5,5% մինչև 4,5%
Սույն թվականի մարտի 18-ից 31ը ընկած ժամանակահատվածում համաշխարհային ֆինանսական շուկաներից եկած ազդակների և ներքին շուկայում ձևավորված բացասական սպասումների արդյունքում սպեկուլյատիվ ավելացավ ամերիկյան դոլարի նկատմամբ պահանջարկը: Մարտի 31-ին ամերիկյան դոլարի փոխաժեքը հասավ 510 դրամի: Կենտրոնական բանկը իր կողմից իրականացված արտարժույթային ինտերվենցիաների միջոցով նվազեցրեց արտարժույթի հանդեպ անառողջ պահանջարկը և ապրիլի վերջ վերադարձրեց ամերիկյան դոլարի փոխարժեքը 478-487 դրամի միջակայք: Դրանով ապահովվեց ֆինանասական շուկայի կայունությունը և իրական հատվածի ընկերությունների գործունեության կանխատեսվելիությունը:
Ֆինանսական կայունության ապահովման նպատակով ՀՀ ԿԲ հաստատեց ֆինանսական կայունության ամրապնդման ծրագիր, որով նախատեսվեց հետևյալ գործիքների կիրառումը՝

- Վարկերի տրամադրում՝ վեց ամսից մինչև հինգ տարի ժամկետով
- Լրացուցիչ իրացվելիության տրամադրում բանկերին , հաճախակի աճուրդների կազմակերպմամբ, գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի շրջանակների ընդլայնմամբ
- Պայմանագրերի կնքում խախտումներ թույլ տված ֆինանսական հաստատությունների հետ տվյալ հաստատության ֆինանսական վիճակի բարելավման և բնականոն գործունեության ապահովման նպատակով
- Բանկերի վարկային, ավանդային, ֆինանսական գործունեությունների սահմանափակում կամ դրանց իրականացման հստակ կարգի սահմանում

- Առամձին ֆինանսական կազմակերպությունների՝ բանկերի, ապահովագրական ընկերությունների համար անհրաժեշտության դեպքում հատուկ տնտեսական նորմատիվների սահմանում
- Շահաբժնի վճարման սահմանափակում անհրաժեշտության դեպքում

ՀՀ ԿԲ-ն բանկային համակարգի վրա ճգնաժամային ազդեցությունը մեղմացնելու նպատակով մասամբ հետաձգեց Բազել 3-ի սկզբունքների ներդրումը: Իրացվելիության նորմատիվները ՝ իրացվելիության ծածկույթի գործակիցը (Liquidity coverage ratio) և զուտ կայուն ֆինանսավորման գործակիցը (Net stable Funding Ratio) նորմատիվների կիռարումը հետաձգվեց մինչև 2021թվականի հունվարի 1: Բացի դրանից ՀՀ ԿԲ-ն հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվի չափը տաս տոկոսից իջեցրեց մինչև ինը տոկոս, ինչպես նաև ավելացրեց լրացուցիչ կապիտալի կշիռը ընդհանուր կապիտալի հաշվարկի մեջ: Լրացուցիչ կապիտալի կշռի ավելացումը թույլ կտա ներգրավել առևտրային բանկերին ստորադաս փոխառությունների և կապիտալի այլ լրացուցիչ գործիքներ: Ընդհանուր առմամբ կապիտալի հետ կապված այս երկու փոփոխությունները կնպաստեն առևտրային բանկերի կողմից ՀՀ տնտեսության լրացուցիչ վարկավորմանը:
Բանկային համակարգը դիմավորեց COVID-19-ով պայմանավորված ճգնաժամը բավականին լավ ֆինանսական ցուցանիշներով՝ ավելցուկային իրացվելիությամբ, բարձր կապիտալով, ավանդների և վարկերի կայուն աճով և վատ, չաշխատող վարկերի ընդհանուր վարկային ներդրումների մեջ փոքր ծավալով:
Այս ճգնաժամը իրական հատվածի ընկերությունների համար դժվարություններ ստեղծեց բանկերի հանդեպ վարկային պարտավորությունների կատարման գործում: Տվյալ իրավիճակը կարող է բանկերում ավելացնել վարկային ռիսկերը, ինչը իր հերթին կարող է բերել իրացվելիության կորստի: Ստեղծված դրությունից դուրս գալու նպատակով առևտրային բանկերը մարտի վերջից իրենց վարկառուների հետ սկսեցին քննարկել ստեղծված իրավիճակից դուրս գալու ծրագրերը և միջոցառումները: Գրեթե բոլոր բանկերը ապրիլի սկզբից մինչև հունիսի վերջ իրենց ճգնաժամից տուժած հաճախորդների համար հայտարարեցին վարկային արձակուրդ: Ըստ այդմ խոցելի խմբերի վարկերը վերակնքվել են ապրիլից հունիս ընկած ժամանակահատվածում ՝ հաշվեգրված վարկի մայր գումարի և տոկոսների սպասարկումը տեղափոխելով հաճախորդի և բանկի համար ընդունելի ժամկետ: Մայիսի 27-ի դրությամբ համաձայն ՀՀ ԿԲ հայտարորության վարկային արձակուրդից օգտվել են 540 հազար ֆիզիկական և 17 հազար իրավաբանական անձիք: Վերակնքված պայմանագրերի ընդհանուր գումարը կազմեց մոև 900մլդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 26,5%-ը:
Բանկային համակարգի հինգ ամսվա ֆինանսական ցուցանիշները ցույց են տալիս, որ պամդեմիայի հետևանքները բանկերի վրա տվյալ պահին այդքան էլ զգալի չեն: Տարվա սկզբից մինչև մայիս բանկային համակարգի ակտիվները աճել են 1,7%-ով և կազմել են 5,927 տրլ դրամ, ընդհանուր կապիտալը աճել է 5,8%, և կազմել է 871.898 մլն դրամ: Մայիսի վերջում բանկերի շահույթը կազմել է 36,9 մլրդ դրամ: Համակարգի կողմից ներգրավված ավանդները մայիսի 31-ի դրությամբ 3,9%-ով քիչ են նույն տարվա սկզբին ներգրավված ավանդների գումարից և կազմել են 3,43 տրլ դրամ: Նվազումը տեղի է ունեցել ցպահանջ ավանդների հաշվին, քանի որ ժամկետային ավանդները աճել են 20.3 մլդ դրամով: Ժամկետային ավանդների մեջ 12% կամ 131.928 մլդ դրամով նվազել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները : Այդ

նվազումը բացատրվում է տնտեսագիտության մեջ հայտնի ,,animal instinct''՝ կենդանական բնազդ հասկացողությամբ: Համաձայն այդ բնազդի ներդրողները տնտեսական և քաղաքական վտանգի ժամանակ իրենց ներդրումները հետ են տանում ներդրումների ծագման երկիր: Ոչ ռեղիդենտների ամերիկյան դոլարով ավանդները մայիսին տարվա սկզբի համեմատ նվազել են 163,4 մլդ դրամով, իսկ դրամով ավանդները ավելացել են 30,5 մլդ դրամով: Այս փաստը ի ցույց է դնում դրամի նկատմամբ ոչ ռեզիդենտների վստահության ավելացումը: 2020թվականի մայիսին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերը տարվա սկզբի համեմատ աճել են 4,5%-ով և կազմել են 3,4 տրլ դրամ: Ամենաշատը աճել են շինարարությանը տրամադրված վարկերը 15,4% և կազմել են 222.4մլդ դրամ: Գյուղատնտեսական վարկերը աճել են 9,5% և կազմել են 165,7 մլդ դրամ, սպասարկման ոլորտի վարկերի աճը 4,2% և կազմել են 291 մլդ դրամ: Արդյունաբերության վարկերի աճը -,2% կամ 512,594դրամ: 2020թվականի մայիսի վերջին աճ է արձանագրվել սպառողական 3% և հիպոթեկային վարկավորումը 6%՝ կազմելով համապատասխանաար 943.8մլդ դրամ և 256.4մլդ դրամ:

Covid-19-ի ազդեցությունը բանկային համակարգը լիարժեքորեն կզգա վարկային արձակուրդների ավարտից հետո: Վարկերի սպասարկման որակը կախված է տնտեսության իրական հատվածում պանդեմիայի ժամանակ և դրանից հետո ստեղծված իրավիճակից: Ամենամեծ հավանական ռիսկը որին կառընչվեն առևտրային բանկերը վարկային ռիսկն է, որը կարող է իր հերթին առաջացնել իրացվելիության ռիսկ: Վարկային ռիսկը կարող է մեծանալ ի շնորհիվ ՀՀ-ում անշարժ գույքի գների անկման, որը կարող է տեղի է ունենալ նոր ընդունված անշարժ գույքի հարկման օրենքի պատճառով:

Այս ճգնաժամի հետևանքով աճել է հեռահար ծառայությունների, առևտրի և բանկինգի ծավալները, իր հերքին բերելով դրսի և ներսի զեղծարարների հետաքրքրության ավելացմանը և դրա հաշվին մեծացնելով գործառնական ռիսկի մաս կազմող IT ռիսկը:

Այս պահի դրությամբ բանկային համակարգում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերի փաթեթում կազմում է մոտ 5% և ճգնաժամի զարգացման վատագույն սցենարով կարող է ավելանալ մինչև հինգ անգամ:

Բոլոր վերոնշյալ ռիսկերը ի հայտ կգամ 2020 թվականի երկրորդ կիսամյակում և բանկային համակարգը պետք է պատրաստ լինի վատագույն սցենարին:

**Առաջարկներ հակաճգնաժամային միջոցառումների վերաբերյալ**

Covid-19 փոխեց մեր կյանքը՝ առողջապահական խնդիրները դարձնելով առաջնային: Հասարակությունը պարտադրված էր վերանայել իր ապրելակերպը, հարմարվել նոր միջավայրին՝ պահպանելով սոցիալական հեռավորությունը, անցնելով հեռահար աշխատանքի և այլն: Որքան արագ հասարակությունը և տնտեսությունը կարձագանքի այս փոփոխություններին և կադապտացվի նոր իրականությանը, այդքան արդյունավետ և անկորուստ կլինի ճգնաժամի հաղթահարումը:

Հինգ ամսվա մակրոտնտեսական ցուցանիշները խոսում են նրա մասին, որ Covid-19 մեծ բացասական ազդեցություն է թողել ՀՀ տնտեսության վրա: Հիվանդության հետագա տարածումը կխորացնի առկա ճգնաժամը, ինչն էլ իր հերթին կարող է բերել 2020 թվականին ՀՆԱ-ի մինչև 10% անկման 2019-ի նկատմամբ:

ՀՀ կառավարությունը պետք է արագ արձագանքի իրավիճակի փոփոխություններին , վերագնահատի իր կողմից իրականացված հակաճգնաժամային ծրագրերը, մշակի և ներդնի նոր ծրագրեր:
ՀՀ Կառավարություն այսօրվա առաջնային խնդիրը առողջապահական է, որն է կանխել կորոնավիրուսի տարածումը: Այս նպատակով անհրաժեշտ է ուժեղացնել կանխարգելիչ միջոցառումները՝ իրականացնել սկրինինգային թեստավորում , դիմակների անվճար տրամադրում, հիվանդների անվճար բուժօգնության ապահովվում, սահմաններին սանիտարահիգենիկ նորմերի խստացում, երկիր մուտք գործող անձանց թեստավորում:
Վերլուծությունները ցույց են տալիս, որ ժամանակին արդյունավետ իրականացված կանխարգելիչ միջոցառումները, հնարավորություն են տալիս փոքր բնակչություն ունեցող երկրներում կարճ ժամկետում կանխել կորոնավիրուսի տարածումը: Պետությունների մեծամասնությունը, այդ թվում մեր հարևան Վրաստանը, այդ միջոցառումները սկսեց իրականացնել դեռևս սույն թվականի հունվարին: Ցավոք մեր կառավարությունը սկսեց կանխարգելիչ միջոցառումների իրականացումը ուշացած, մարտի 16-ից հետո, երբ դրանք արդեն շատ օգուտ տալ չէին կարող: Դատելով Առողջապահության նախարարոջթյան կորոնավիրուսով վարակվածների և մահացածների պաշտոնական վիճակագրությունից՝ ՀՀ պետբյուջեից կորոնավիրուսի դեմ պայքարի համար տրամադրված միջոցները օգտագործվել են անարդյունավետ:
ՀՀ կառավարության կարևորագույն արդիական խնդիրներից է նաև մեղմացնել կորոնավիրուսի ազդեցությունը տնտեսության վրա: Դա ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում իրականացվում է հարկաբյուջետային և դրամավարկային գործիքների միջոցով: Հարկաբյուջետային խրախուսումը ՀՀ կառավարությունը իրականացնում է կորոնավիրուսի հետևանքները մեղմացնող տնտեսական, սոցիալական ծրագրերի և բյուջեից ֆինանսավորվող կապիտալ ծրագրերի իրականացման միջոցեվ: Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերով նախատեսված միջոցառումներում մեծ տեսակարար կշիռ ունեն վարկային կոմպոնենտ պարունակող օժանդակությունները: Այս միջոցառումների մեջ տեղ չեն գտել ֆինանսավորման հատուկ պայմանները պանդեմիայից ամենաշատը տուժած զբոսաշրջության ոլորտի, արտահանը միտված ընկերությունների, շինարարության ոլորտի և արդյունավետ գյուղատնտեսության համար: Շատ դեպքերում օժանդակ ֆինանսավորումը ավելացնում է ընկերությունների առանց այդ էլ բարձր վարկային բեռը: Հայաստանյան ընկերությունների մոտ պարտք/կապիտալ գործակիցը գերազանցում է երկուսը: Տնտեսության անորոշ իրավիճակի պայմաններում շատ ընկերությունների կողմից աննպատակ է լրացուցիչ վարկի հաշվին որոշակի ծախսերի իրականացումը, առավել ևս սարքավորումների ձեռք բերումը, ուստի արտոնյալ վարկեր վերցնելը արդարացված է միմիայն հինվարկային պայմանագրերը նորով բարելավելու փաստով:
Պանդեմիայի ընթացքում գործող ընկերությունները կարիք ունեին որոշ իրենց վճարումների՝ հարկային, մաքսային, կոմունալ հետաձգման: Սակայն կառավարությունը հարկային և մաքսային վճարումների հետաձգում չկիրառեց՝խուսափելով բյուջեի մուտքերի կրճատումից:
Գյուղատնտեսության ոլորտին օժանդակության ծրագրերը էականորեն չեն տարբերվում նախորդ տարիներին իրականացվածներից: Տեղին կլիներ

կառավարության կողմից օժանդակությունների միջոցով արդյունավետ գյուղատնտեսության զարգացման խրախուսումը: Սա պետության համար կունենար երկարաժամկետ արդյունք:
Covid-19-ի ազդեցությունը զբոսաշրջության ոլորտի վրա մեղմելու նկապակով հարկավոր էր փոխհատուցել տվյալ ոլորտի ընկերությունների գործող վարկերի երեք ամսվա հաշվեգրված տոկոսագումարը և հետաձգել հարկերի վճարումները: Կարևոր է նաև կառավարության կողմից ներքին զբոսաշրջության խրախուսումը՝ սոց փաթեթներով տեղական հյուրանոցներից օգտվող շահառուների շրջանը ընդլայնելով:
Շինարարության ոլորտի զարգացումը խրախուսելու նպատակով պետությունը պետք է հանդիսանա պատվիրատու՝ պատվիրելով որոշակի խավի համար բնակարանների կառուցումը, զուգորդելով սա նոր արտոնյալ հիփոթեքային ծրագրերի իրականացմամբ: Նոր հիփոթեփային ծրագրերը իրենց հերթին կաշխուժացնեն անշարժ գույքի շուկան՝ ձևավորելով անշարժ գույքի նկատմամբ նոր պահանջարկ:
Աշնանը գյուղմթերքի անխափան մթերման համար, հաշվի առնելով գյուղմթերք վերամշակող ընկերությունների բարդ ֆինանսական վիճակը, պետությունը պետք է պատվիրի նրանց իր հաշվին մթերել, վերամշակել և ապա պատրաստի արտադրանքը պետությանը հանձնել հետագայում համատեղ իրացման պայմանով:
Պանդեմիայի երկարաձգման դեպքում կառավարությունը պետք է պատրաստ լինի մասնակցել ժամանակավոր ֆինանսական դժվարություններ ունեցող տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների կապիտալում, պայմանով որ ճգնաժամի ավարտից հետո պետությունը օտարում է ճգնաժամի արդյունքում ձեռք բերված բաժնետոմսերը:
Այս բոլոր միջոցառումները կավելացնեն պետական բյուջեի դեֆիցիտը, սակայն այլ տարբերակներ այս ճգնաժամի հետևանքները մեղմացնելու համար չկան: Պանդեմիայի հետևանքները տնտեսության վրա հնարավորինս մեղմելու նպատակով 2020 թվականին ՀՀ կառավարությանը անհրաժեշտ կլինի ևս 300-400 մլդ դրամ գումար: Համեմատության համար 2009 թվականի ճգնաժամի արդյունքում ՀՀ կառավարության տնտեսության աջակցման ծրագրերը կազմել են մոտ 270 մլդ դրամ:
Այդ միջոցները հայթայթելու համար պետությունը պետք է դիմի արտաքին ֆինանսավորման աղբյուրներին՝ չվախենալով ավելացնել պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը: 2020 թվականի վերջում պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը կարող է գերազանցել 62%-ը:
Covid-19-ի հետևանքով առաջացած ճգնաժամը կարող է մեր երկրում հանդիսանալ տնտեսության կառուցվածքի փոփոխման և արդյունավետության բարձրացման խթան:

**Հեղինակ՝ Օսիպյան Աշոտ Ֆելիքսի**

Օգտագործված աղբյուրների ցանկ՝


1. https://tradingeconomics.com/armenia/employed-persons
2. https://unstats.un.org/unsd/ccsa/documents/covid19-report-ccsa.pdf
3. http://pubdocs.worldbank.org/en/282401592293058874/ARM-MEU-June-2020.pdf
4. https://www.gov.am/am/covid19./
5. https://www.armstat.am/am/?nid=82&id=2271
6. https://fbc.net.ua/news/ekonomika/mirovoj-turizm-poteryaet-1-trln-dollarov-iz-za-koronavirusa/
7. https://blog.oblivki.biz/molniya-vliyanie-coronavirus-na-partnerskiy-marketing
8. https://www.cba.am/am/SitePages/fscrisismanagement_introduction.aspx
9. https://www.petekamutner.am/DefaultTs.aspx?sid=ts
10. Global Investment Strategy, The Global COVID-19 Fiscal Response: Is It Enough?

## 3. Հայաստանում կորոնավիրուսի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը

**Հետազոտության նպատակը.**

Սույն հետազոտության նպատակն է՝ փաստագրել ՀՀ-ում կորոնավիրուսի տարածման հետևանքով սահմանված ռեժիմը, դրա շրջանակներում կիրառված սահմանափակումներն ու իրականացված միջոցառումները, ինչպես նաև քննարկել դրանց իրավաչափությունը և ազդեցությունը մարդու իրավունքների վրա: Անդրադարձ կկատարվի նաև համաճարակի դեմ պայքարի միջոցառումներին վերաբերող որոշումների կայացման ընթացակարգային արդարացիությանը (թափանցիկություն, հաշվետվողականություն, վերահսկողություն) և այդ կապակցությամբ սոցիալական մեդիայում տեղ գտած հանրային արձագանքներին:

**Կորոնավիրուսի տարածումը Հայաստանում և դրա դեմ սկզբնական պայքարը.**

Հայաստանում նոր կորոնավիրուսով վարակվելու առաջին դեպքի մասին պաշտոնապես հայտարարվեց 2020 թվականի մարտի 1-ին: Այնուամենայնիվ, մարտի 2-ին պաշտոնապես մեկնարկվեց ապրիլի 5-ին կայանալիք ՀՀ սահմանադրական հանրաքվեի քարոզարշավը[48]: 2020 թվականի մարտի 11-ին հաստատվեց ևս 3 դեպք, իսկ մարտի 16-ին ևս 17 դեպք: Այնուամենայնիվ, այս ժամանակահատվածում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ ԱՅՈ-ի քարոզարշավի լայնամասշտաբ հանդիպումները չդադարեցին: Ավելին, պարզվեց, որ քարոզչական հանդիպումներին մասնակցած քաղաքացիներից մեկի մոտ ախտորոշվել է COVID-19 և վերջինս հոսպիտալացվել է:

Նշված ժամանակահատվածում վարչապետի կողմից հնչել են արտահայտություններ, որոնք հանրային ընկալումների մեջ անլրջացրել են համավարակի դեմ պայքարը (օրինակ՝ կորոնավիրուսն ում շունն է, կորոնավիրուսը պինցետով կհանենք և տնական արաղով դեզինֆեկցիա կանենք[49]):

Միայն մարտի 16-ին ՀՀ կառավարությունը ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով մի շարք սահմանադրական դրույթներ, տեղեկացրեց, որ Հայաստանի Հանրապետության

48 https://www.president.am/hy/decrees/item/4972/
49 https://www.youtube.com/watch?v=1nkVIwtkrmY

Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստման և անցկացման նպատակով իրականացվող բոլոր աշխատանքները, գործընթացները և միջոցառումները դադարեցվում են:

Հետաքրքրական է նաև, որ արտակարգ դրություն հայտարարելու պահին հաստատված մեծաքանակ դեպքերը կապված են եղել երկու հիմնական օջախների՝ Էջմիածնի և Երևանի կարի ֆաբրիկայի հետ, ինչը վկայում է, որ սկզբնական փուլում կասկածելի անձանց մեկուսացնելու համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Հուլիսի 20-ի դրությամբ արդեն ՀՀ-ում գրանցվել է կորոնավիրուսով վարակվածության 35254 դեպք, բուժվածները՝ 24206, իսկ մահվան դեպքերը՝ 662:




«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծվեց պարետատուն, որի ղեկավարման համար պարետ նշանակվեց փոխվարչապետ Տիգրան Ավինյան: Նաև սահմանվեց պարետի որոշմամբ այլ սահմանափակումների կիրառման և կանոնների սահմանման հնարավորություն:

Կառավարությունն իր այս որոշմամբ շեղումներ իրականացրեց մարդու իրավունքների ոլորտում իր հիմնարար պարտավորություններից՝ սահմանելով լրջագույն սահմանափակումներ: Մասնավորապես, սահմանափակվեցին 1) անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը և տրանսպորտային միջոցների տեղաշարժը, 2)

անձանց սեփականության իրավունքը, 3) հավաքների կամ հանրային միջոցառումների իրականացնելու իրավունքը, 4) տնտեսական գործունեություն առանձին տեսակներ, 5) կրթական հաստատությունների գործունեությունը:

Լայնածավալ արգելքներ սահմանվեցին նաև զանգվածային լրատվության միջոցների գործունեության նկատմամբ, ինչն առաջ բերեց նաև միջազգային հանրության մտահոգությունը: Արդյունքում, այդ արգելքներն իրենց ուժը կորցրեցին Կառավարության 13.04.2020 թվականի թիվ 543-Ն որոշմամբ:

«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին կառավարության որոշման հիման վրա պարետի կողմից ընդունել են մի քանի տասնյակ որոշումներ, որոնց մի մասը ունեցել են նորմատիվային բնույթ՝ անձանց համար սահմանելով սահմանափակումներ և պարտականություններ:

**Պարետի նորմատիվային գործունեության իրավաչափությունը.**

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով **Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր**: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին»:

Այսինքն, **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված են բացառապես Սահմանադրությամբ նախատեսված մարմինները**: Սրան հակառակ, **ՀՀ պարետի պաշտոնը** սահմանվել է «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով և **չի համարվում Սահմանադրությամբ նախատեսված մարմին**:

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը չի սահմանել (և չէր էլ կարող սահմանել) պարետի կողմից ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր ընդունելու իրավասություն: Այսպես, մինչև 29.04.20 ՀՕ-238-Ն ընդունումը (ուժի մեջ է մտել 07.05.2020 թվականին) խմբագրությամբ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավոր սահմանափակվող իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև իրավունքների և ազատությունների սահմանափակումների ծավալը՝ համաձայն սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջների»:

Նույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանվում են արտակարգ դրության ժամանակ կիրառվող միջոցառումները, իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակումները:

Նշված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակումները սահմանվում են և դրանց ծավալը որոշվում է արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ:

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև այդ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 29.04.2020 թվականին ընդունված և 07.05.2020 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-238-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրության 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման և այլ հրատապ հարցեր լուծելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել արտակարգ դրության տարածքի պարետատուն (այսուհետ՝ Պարետատուն):

2. Պարետատունն իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումը: Պարետատունը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության կառավարության նշանակած պարետը»:

Այսինքն՝ օրենքի նշված խմբագրության իմաստով պարետատունը ստեղծվում է Կառավարության որոշմամբ՝ արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման և այլ հրատապ հարցեր լուծելու նպատակով, և պարետատանը վերապահված է արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարման գործառույթ, իսկ ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության նշանակած պարետը: Միևնույն ժամանակ, վերջինս օժտված չի եղել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները և ազատությունները սահմանափակող նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությամբ (այդպիսի բացառիկ իրավասությունը պատկանել է ՀՀ կառավարությանը):

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը միայն 29.04.2020 թվականին ընդունված և 07.05.2020 թվականին ուժի մեջ մտած «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«1. Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման և արտակարգ դրությամբ պայմանավորված այլ

հրատապ հարցեր լուծելու նպատակով արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է սահմանվել, որ վարչապետը կամ այդ որոշմամբ սահմանված փոխվարչապետը արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե հանդես է գալիս որպես արտակարգ դրության տարածքի պարետ:

2. Պարետն իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումը, ինչպես նաև համակարգում է արտակարգ դրության պայմաններում կիրառվող միջոցառումների իրականացումը և սահմանափակումների կիրառումը: Սույն մասով սահմանված լիազորությունների իրականացման համար պարետը կարող է ընդունել համապատասխանաբար վարչապետի կամ փոխվարչապետի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

3. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել արտակարգ դրության տարածքի պարետատուն՝ որպես համապատասխանաբար վարչապետին կամ փոխվարչապետին կից խորհրդակցական մարմին: Պարետատունը ղեկավարում է պարետը: Պարետատան կազմը սահմանվում է արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ գործունեության կարգը կարող է սահմանել պարետը»:

Վերոնշյալ իրավանորմը ըստ էության թույլատրեց Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ իրավունք վերապահել վարչապետին կամ փոխվարչապետին արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե հանդես գալ որպես արտակարգ դրության տարածքի պարետի պաշտոնում: Այդուհանդերձ, նշված փոփոխությունից հետևում է, որ Պարետը համապատասխանաբար վարչապետի կամ փոխվարչապետի ակտեր կարող է ընդունել **միայն նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորությունների** իրականացման համար, իսկ այդպիսի լիազորություններն իրենցից ենթադրում են միայն արտակարգ դրության պայմաններում **կիրառվող միջոցառումների իրականացում և սահմանափակումների կիրառման համակարգում, արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարում և որևէ դեպքում չեն կարող ենթադրել ֆիզիական և իրավաբանական անձանց իրավունքները ազատությունները սահմանափակող նորմատիվ իրավական ակտի ընդունում**:

Միաժամանակ, վերոնշյալ նորմը չի կարող մեկնաբանվել որպես պարետի պաշտոնում վարչապետի կամ փոխվարչապետի լիազորություններ իրականացնելու

թույլտվություն, քանի որ նախ՝ վարչապետի, փոխվարչապետի և պարետի պաշտոնները հստակորեն սահմանազատված են, երկրորդ՝ օրենսդիրը սեփական նախաձեռնությամբ չի կարող է տարբեր պաշտոններ նույնացնել Սահմանադրությամբ նախատեսված մարմինների հետ և, առանց Սահմանադրի կամքի, ստեղծել Սահմանադրության չնախատեսված մարմիններին օժտել նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությամբ»:

Ուստի, փոխվարչապետը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված է բացառապես Սահմանադրությամբ նախատեսված փոխվարչապետի կարգավիճակում, իսկ փոխվարչապետի կարգավիճակից զատ այլ կարգավիճակում, այդ թվում պարետի, նա չի կարող ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Անգամ եթե նշված փոփոխությունը նենգափոխվի և մեկնաբանվի, որպես ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր ընդունելու իրավասության օժտում, այն մի կողմից հակասահմանադրական է, մյուս կողմից չի կարող լեգիտիմացնել մինչև օրենսդրական փոփոխության կատարումը պարետի ընդունած որոշումները:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ Պարետը օրենքով լիազորված չէ ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, իսկ 07.05.2020 թվականին ուժի մեջ մտած խմբագրությամբ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով Պարետը չի լիազորվել ընդունել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները ազատությունները սահմանափակող նորմատիվ իրավական ակտեր: Նշված դրույթով ՀՀ պարետը լիազորված չէ սահմանել մարդու հիմնական իրավունքների նոր սահմանափակումներ կամ ընդլայնել ՀՀ կառավարության արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշմամբ սահմանված սահմանափակումները:

**Հավաքների ազատության իրավունքի սահմանափակումների իրավաչափությունը.**

«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» որոշման 16-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում **արգելվում է հավաքների և գործադուլների կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցելը**: Նույն որոշման 17-րդ կետը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում արգելել է հանրային միջոցառումների կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցությունը:

Ընդ որում, հանրային միջոցառում հասկացությունը գործածվել է ինքնավար իմաստով, որը ներառել է 20 և ավելի անձանց մասնակցությամբ մի շարք միջոցառումներ, սակայն որ հավաքները:

14 մայիսի 2020 թվականի ՀՀ-ում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ 729-Ն որոշմամբ 20 թիվը փոխարինվել է 5-ով: Արդեն 12 հունիսի 2020 թվականի թիվ 933-Ն որոշմամբ սահմանվել է, որ 17-րդ կետով նախատեսված սահմանափակումներից պարետի որոշմամբ կարող են նախատեսվել բացառություններ:

Հետաքրքական է, որ թեև հավաքներն ու գործադուլները հանրային միջոցառման հատուկ տեսակ են և գտնվում են ուժեղացված պաշտպանության ներքո, սակայն մինչև 20, իսկ փոփոխությունների հետո մինչև 5 անձի մասնակցությամբ հավաքներն ու գործադուլները չեն թույլատրվել՝ ի հակադրության մյուս հանրային միջոցառումների: Արդյունքում, ժամանցային, սպորտային և այլ միջոցառումները անհամաչափորեն առավ պաշտպանություն են ստացել հավաքների ու գործադուլների իրավունքի նկատմամբ:

Հարկ է նկատի ունենալ, որ թեև համավարակով պայմանավորված մի շարք երկրներ ևս սահմանափակումներ են կիրառել հանրային միջոցառումների նկատմամբ, սակայն վերջիններիս չեն դրսևորել հատուկ, խտրական և վատթար մոտեցում հենց հավաքների ազատության իրավունքի նկատմամբ: Մասնավորապես, հավաքների ազատության իրավունքից շեղումներն են թույլատրել հիմնականում Արևելյան Եվրոպայի երկրները (Լատվիա, Էստոնիա, Ռումինիա, Վրաստան, Մոլդովա, Ալբանիա, Սերբիա, Հյուսիսային Մակեդոնիա) և որոշ Հարավային Ամերիկայի երկրներ: Նման շեղումներ չեն կատարել ժողովրդավարական ավանդույթներ ունեցող Արևմտյան Եվրոպայի երկրները: Ընդ որում, շեղումներ թույլատրած երկրներն արգելել են բոլոր հանրային միջոցառումները, այդ թվում հավաքները: Ավելին, որոշ երկրներ միայն նախատեսել են հավելյալ պահանջներ, բայց ամբողջովին չեն արգելել հավաքները[50]:

Համավարակի պայմաններում հավաքների ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի առնչությամբ իրենց դիրքորոշումն են հայտնել մի շարք

50 https://www.rightofassembly.info/assets/downloads/Derogations_by_States_Parties_from_the_right_to_assembly_on_the_Basis_of_the_COVID_19_Pandemic_(as_of_13_July_2020).pdf

միջազգային կառույցներ, այդ թվում՝ Հավաքների և միավորվելու ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը[51]:

**Բացի այդ, եթե սկզբնական շրջանում հավաքների ազատության իրավունքի արգելքը կարող էր ընկալվել որպես անհրաժեշտ և համաչափ, այսօր նման ընկալումն այլևս գոյություն չունի, քանի որ.**

**1) շեղումներ թույլատրած երկրների մեծամասնությունն արդեն իսկ մայիս ամսին վերացրել են սահմանափակումները կամ էականորեն մեղմել դրանք,**

**2) համավարակի տևականության գիտակցման պայմաններում իրավունքի իրականացման հնարավորությունը ոչ թե արգելափակվում է, այլ պայմանավորվում կանխարգելիչ միջոցառումներով (սոցիալական հեռավորության պահպանում, դիմակների կրում և այլն), նույն կերպ ինչ հանրային կյանքի այլ ոլորտները,**

**3) ներդրվում են հավաքների ազատության իրավունքի իրացման նաև օնլայն հարթակներ:**

**Առանձին սահմանափակումների պիտանիությունը և անհրաժեշտությունը.**

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր»:

ՀՀ պարետի որոշմամբ սահմանված մի շարք սահմանափակումներ չեն բավարարում իրավունքների սահմանափակման պիտանիության և անհրաժեշտության չափանիշներին: Այսպես, 2020թ. մայիսի 3-ի N 63 որոշման 5-րդ կետի համաձայն՝ ՀՀ տարածքում պարտադիր է հանրային բաց վայրերում դիմակի առկայությունը, իսկ անձնական օգտագործման մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներում՝ դիմակ կրելը, եթե վարորդից բացի մեքենայում առկա է առնվազն մեկ ուղևոր:

51 https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=25788&LangID=E

Նշված կանոնի նպատակը բնակչության առողջության պահպանումը և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելն է: Այս համատեքստում ակնհայտ է, որ եթե համատեղ բնակվող ընտանիքի անդամներին թույլատրելի է իրենց բնակարանում միմյանց հետ գտնվել առանց դիմակ, ապա նույն անձանց կողմից դիմակով մարդատար տրանսպորտային միջոցում գտնվելն ոչ միայն անտրամաբանական է, այլև որևէ կերպ չի կարող նպաստել առողջության պահպանմանը և վարակի տարածումը կանխելուն:

Այս համատեքստում քաղաքացին չի կարող գիտակցել, որ համատեղ բնակվող ընտանիքի անդամի հետ առանց դիմակ գտնվելն ունի իրավական բնույթ, սակայն մարդատար տրանսպորտային միջոցում՝ հակաիրավական: Նույն կերպ անձը չի կարող կանխատեսել մարդատար տրանսպորտային միջոցում իր ընտանիքի անդամի հետ առանց դիմակ գտնվելու վնասակար հետևանքները, քանի որ դրա վնասակար հետևանքները բացառվում են համատեղ բնակվող ընտանիքի անդամների դեպքում:

**Համավարակի կանխարգելումը և տեխնոլոգիաները.**

**Համաճարակի հետևանքով հայտարարված արտակարգ դրության ժամանակ պետությունն իրավունք ստացավ նաև միջամտել քաղաքացիների անձնական տվյալներին: Ազգային ժողովը 2020թ. մարտի 31-ին ընդունեց մի նախագիծ, որն իշխանություններին օժտեց վերահսկողության լայն լիազորություններով, այդ թվում հնարավորություն տվեց օգտագործել բջջային հեռախոսների տվյալները՝ կորոնավիրուսի դեպքերին հետևելու համար:**

**Ըստ էության, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում լրացումներ կատարելու միջոցով նախատեսվեցին քաղաքացիների զանգերի և տեղաշարժի վերահսկման մեխանիզմներ, ինչը սահմանափակում է մասնավոր կյանքի իրավունքը և ապահովում հասանելիություն վարակակիր անձանց գաղտնի բժշկական տեղեկատվությանը:**

**Թեև շուրջ մեկ տասնյակ հասարակական կազմակերպություններ[52] Կառավարությանը և Ազգային ժողովին հորդորեցին ձեռնպահ մնալ խնդրահարույց օրենքի ընդունումից և կիրառումից՝ մեկ օրում երկու արտահերթ նիստ հրավիրելով՝ Ազգային ժողովը ուշ երեկոյան երկրորդ**

52 https://www.kavkaz-uzel.eu/articles/347729/

**ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց մարդկանց տեղաշարժը, հեռախոսազանգերի շրջանակը հասանելի դարձնելու նախագիծը՝ կորոնավիրուսի դեմ պայքարի արդյունավետությունը մեծացնելու պատրվակով: Հասարակական կազմակերպություններն ահազանգեցին մի կողմից այն մասին, որ լրացուցիչ վերահսկողական մեխանիզմների ներդնումը խաթարում է մարդու իրավունքների պաշտպանության ամբողջ համակարգը և անդառնալի հետևանքներ է ունենալ ժողովրդավարական ինստիտուտների գործունեության վրա, մյուս կողմից բարձրաձայնեցին հավաքագրվող անհատական տվյալների պաշտպանության պատշաճ մակարդակի բացակայությունը:**

**Մարդու իրավունքների պաշտպանը նույնպես մտագոհություն օրենքում մարդու իրավունքների բավարար երաշխիքների բացակայության մասին[53]:**

**Այդ մտահոգություններն իրենց աջակցությունը ստացան նաև միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների կողմից: Մասնավորապես, Human Rights Watch-ը հորդորեց Կառավարությանը ստեղծել տվյալների անվտանգության ապահովման կառուցակարգեր՝ նվազեցնելու համար արտահոսքի ռիսկերը և պաշտպանելու մարդկանց թվային անվտանգությունը,[54] ինչը, սակայն, անտեսվեց Կառավարության կողմից:**

**Ժամանակակից տեխնոլոգիաների վերահսկողության անսահմանափակ ներուժի պարագայում այդ տեխնոլոգիաների միջոցով որոշ վերահսկողության ձևեր թեև գնահատվում են անհրաժեշտ և համաչափ, դրանց կիրառումը անպայմանորեն պետք է լինի վերահսկելի, չափելի և ստուգելի: Նաև պետք է նախատեսվեն հնարավոր կամայականությունների և չարաշահումների դեմ պաշտպանության մեխանիզմներ: Այս առումով, Հայաստանում սահմանված չէ արդյունավետ պաշտպանության մեխանիզմ, որով անձը կարող է վիճարկել իր նկատմամբ միջամտությունների իրավաչափությունը և հասնել իր խախտված իրավունքների վերականգնմանը:**

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 3-ի թիվ 461 – Ն որոշման իրավակարգավորումներից բխում է, որ՝

53 https://ombuds.am/am/site/ViewNews/1137

54 https://www.hrw.org/hy/news/2020/04/06/340302

ա) վարակակրի հետ հավանական շփման փաստի վերաբերյալ ենթադրյալ կոնտակտավորի և պետական մարմինների միջև առկա հակասությունը հաղթահարելու մեխանիզմներ գոյություն չունեն,

բ) կամայական կերպով հնարավոր է անձին հրահանգավորել ինքնամեկուսանալ, իսկ վերջինիս կողմից հրաժարվելու դեպքում անձի նկատմամբ կարող է կիրառվել այսպես կոչված «տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում որոշակի տարածքի (վայրի) սահմաններում» (ըստ էության անձին զրկում են ազատությունից այն վայրում, որտեղ կան վարակակիրներ),

գ) ենթադրյալ կոնտակտավորներին չի տրվում թեստավորման իրավունք, որով կարող է հավաստվել ենթադրյալ կոնտակտավորի վարակակիր չլինելու հանգամանքը, ինչպես նաև ինքնամեկուսանալու կամ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում կիրառվելու անհրաժեշտության բացակայությունը:

Այս պարագայում ակնհայտ է, որ չհաստատված կասկածի հիման վրա, պետությունը, ենթադրյալ կոնտակտավորին, առանց թեստավորման ապահովման, զրկում է ազատությունից այն վայրում, որտեղ կարող են լինել վարակակիրներ: Տվյալ դեպքում ենթադրյալ կոնտակտավորի նկատմամբ հնարավոր վարակման ռիսկ է ստեղծվում՝ այդպիսով վտանգի ենթարկելով վերջինիս կյանքը: Առանց դրական թեստի արդյունքների անձի կյանքը վտանգելու բոլոր բացասական հետևանքների պատասխանատուն այս դեպքերում դառնալու է պետությունը:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը անձնական ազատությունից զրկված անձանց տալիս է նվազագույն իրավական երաշխիքը, այն է՝ վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, ինչից ևս ենթադրյալ վարակակիրները զրկված են: Ավելին առանց թեստի դրական արդյունքների կամ դրա դրա ապահովման համար ենթադրյալ կոնտակտավորին մեկուսացնելու նպատակով նրա բնակարան մուտք գործելը և նրան մեկուսացնելը կհամարվի ապօրինի: Այս պարագայում ակնհայտ է, որ չհաստատված կասկածի հիման վրա ենթադրյալ կոնտակտավորի տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը այն վայրում, որտեղ կարող են լինել վարակակիրներ, անհամամասն է ցանկալի արդյունքին: Տվյալ դեպքում ունենում ենք այն իրավիճակը, երբ, ենթադրյալ կոնտակտավորի (ով հնարավոր է վարակակիր չէ և առողջ է) բուժման նպատակը հռչակելով, արտաքին միջամտությամբ նրա նկատմամբ հնարավոր վարակման ռիսկ է ստեղծվում՝ այդպիսով վտանգի ենթարկելով վերջինիս կյանքը:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ նշված իրավակարգավորումները համաչափ չեն հետապնդվող իրավաչափ նպատակի հետ և վտանգի են ենթարկում անձի կյանքը:

**Մյուս կողմից, չնայած նման խնդրահարույց և անձանց իրավունքների խիստ ներխուժող կարգավորումների նեդրմանը՝ ՀՀ-ում կորոնավիրուսի համավարակի տարածվածությունը զարգացավ սրընթաց տեմպով, և մեկ միլիոն բնակչության հաշվով կորոնավիրուսի վարակակիրների թվով Հայաստանը դարձավ առաջատարներից մեկը[55]:**

**Ավելին գործնականորեն հաստատվեց նաև անձնական տվյալների անվտանգության բացակայությունը: Արդեն հունիսի 13-ին հայտնի դարձավ, որ հաքերային հարձակման արդյունքում հրապարակային են դարձել կորոնավիրուսով հիվանդ կամ կոնտակտավոր 3500 անձի վերաբերյալ տեղեկություններ: Դրանք ներառել են անձի անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան թիվ, սեռ, ՀԾՀ, նույնականացման քարտի համար կամ անձնագրային տվյալներ, հեռախոսահամար և այլն: Ընդ որում, չի բացառվել նաև այն վարկածը, որ հաքերային հարձակումը ուղղված է եղել էլեկտրոնային հասցեին, որում առկա են եղել նշված անձանց ցուցակները այն դեպքում, երբ անձնական տվյալները պետք է պաշտպանված լինեին նաև չարտոնված օգտագործումներից:**

**Համավարակի դեմ պայքարում լուսանկարների օգտագործումը.**

Տեխնոլոգիական լուծումներից զատ համավարակի դեմ պայքարում ՀՀ Վարչապետը նախաձեռնեց իր Facebook-յան էջում դիմակի կրման ռեժիմը խախտած անձանց լուսանկարների և տեսանյութերի հրապարակումներ:

Թեև լուսանկարը մարդու անձնական կյանքի բաղկացուցիչ է և այն պետք է օգտագործվի անձի համաձայնությամբ, այդուհանդերձ, այս նախաձեռնության շրջանակում, առանց համապատասխան համաձայնությունների, վարչապետը տարածեց դիմակի կրման ռեժիմը խախտած անձանց լուսանկարներն ու տեսանյութերը: Ավելին արձանագրվեցին դեպքեր, երբ վարչապետը տեղադրել էր արխիվային լուսանկար՝ առանց պարզելու դրա կատարման իրական ժամանակահատվածը:

Վարչապետն իր պաշտոնական էջում հրապարակեց նաև կարճ շորտեր հագած մի երիտասարդ աղջկա լուսանկար, ով մետրոյով երթևեկելիս դիմակ չէր կրում և կատարեց հետևյալ կից գրառումը. «Անթաքույց գեղեցկություն»: Արդյունքում,

55 https://www.who.int/docs/default-source/wha-70-and-phe/20200721-covid-19-sitrep-183.pdf?sfvrsn=b3869b3_2 https://www.endcoronavirus.org/countries

լուսանկարի մեկնաբանություններում օգտատերերը վիրավորական արտահայտություններ հնչեցրեցին աղջկա հասցեին:

Միջադեպին արագ արձագանքեց Մարդու իրավունքների պաշտպանը, ով գրել էր. «Սոցիալական ցանցերի բոլոր օգտատերերին խնդրում եմ չտարածել աղջկա լուսանկարը՝ անկախ նրանից դեմքը փակ է, թե ոչ: Կոնկրետ դեպքի առանձնահատկությունը հաշվի առնելով՝ եթե տարածել եք, խնդրում եմ հեռացնել լուսանկարը և վիրավորական մեկնաբանություն պարունակող արտապատկերները»[56]:

Վարչապետ Փաշինյանն ավելի ուշ ջնջեց այդ լուսանկարը և ներողություն է խնդրեց բոլոր այն քաղաքացիներից, որոնց հասցեին իր էջում «որևէ թթու խոսք է հնչել»:

**Ինքնամեկուսացածների կողմից ինքնալուսանկարվելու պահանջի իրավաչափությունը.**

Անձի դեմքը, պատկերը պաշտպանված են անձնական կյանքի իրավունքի ներքո: Այդ պաշտպանությունն ավելի ուժեղ է, երբ խոսքը գնում է մասնավոր տարածքում անձի պատկերի պաշտպանության մասին: Ուստի ինքնալուսանկարվելու պահանջը և ավելին ինքնալուսանկարի ուղարկումը պարետատուն երկմակարդակ միջամտություն է մասնավոր կյանքին: Ըստ ներկայացված տեղեկատվության, ինքնալուսանկարի միջոցով պարետատունը համոզվում է, որ տվյալները լրացրել է ինքնամեկուսացման մեջ գտնվողը:

Համաձայն միջազգային չափորոշիչներին և սահմանադրական երաշխիքներին, անձնական կյանքի միջամտող միջոցը պետք է լինի անհրաժեշտ, այսինքն՝ չպետք է գոյություն ունենա դրված նպատակին հասնելու ավելի մեղմ միջոց: Այս համատեքստում հիմնավորելի չէ, որ ինքնամեկուսացվածի կողմից տվյալների լրացման հանգամանքի պարզման միակ բացառիկ միջոցը դա անձանց ինքնալուսանկարներ հավաքելն են: Ավելին, ինքնամեկուսացվածը կարող է իր ինքնալուսանկարը փոխանցել այլ անձի և նա տվյալները լրացնելու հետ մեկտեղ կցի տրամադրված նկարը: Մյուս կողմից, պարզապես կարելի է վարչական կամ քրեական պատասխանատվության սպառնալիքով բացառել ինքնամեկուսացվածի փոխարեն տվյալների լրացումն այլ անձանց կողմից, կամ նույն ինքնամեկուսացվածի կողմից

56 https://armeniasputnik.am/armenia/20200605/23284773/mip-arman-tatoyan.html

հաղորդագրությունում տեղադրված հղումի փոխանցումը այլ անձանց՝ տվյալներ լրացնելու նպատակով:

Բացի այդ, միջամտության ընտրված միջոցը պետք է լինի չափավոր, այսինքն, այն ողջամիտ հավասարակշռության մեջ պետք է գտնվի հետապնդվող նպատակի հետ: Այս պարագայում ակնհայտ է, որ կարգավորման հիմքում դրված է սխալ կանխավարկած, այն է՝ քաղաքացիների տվյալներին չհավատալը, քանի դեռ սեփական իրավունքները խախտելու միջոցով չեն ապացուցել հակառակը: Ստացվում է, որ ՀՀ քաղաքացիները ոչ օրինապահ են, ուստի որպես պարետին խաբելը բացառող միջոց ներդրվել վերջիններիս անձնական կյանքի իրավունքը սահմանափող միջոց:

**Տնտեսական գործունեության սահմանափակումների իրավաչափությունը.**

ՀՀ Կառավարության՝ «ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 16.03.2020 թվականի որոշման հավելվածի 17-րդ կետի համաձայն՝

«**Պարետի որոշմամբ** սահմանված տարածքներում արգելվում է հանրային միջոցառումների կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցությունը: Սույն կետի իմաստով հանրային միջոցառումներ են 20 և ավելի անձանց մասնակցությամբ անցկացվող հետևյալ միջոցառումները.

1) համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները և սպորտային, մշակութային, կրթական այլ միջոցառումները.

2) ժամանցային միջոցառումները.

3) տոնական և հիշատակի միջոցառումները, ներառյալ, բայց չսահմանափակվելով ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման միջոցառումները.

4) պարետի ցուցումով որպես հանրային միջոցառում որակված այլ միջոցառումներ:»

Նշված որոշման 20-րդ կետի համաձայն՝ «**Պարետի ցուցումով** համապատասխան համայնքներում արգելվում է հանրային սննդի օբյեկտների, առևտրի և զվարճանքի բազմաֆունկցիոնալ կենտրոնների գործունեությունը:»

«ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 22.03.2020 թվականի թիվ 324 որոշմամբ թիվ 298-ն որոշման հավելվածի 20-րդ կետը շարադրվել

է հետևյալ խմբագրությամբ.«**Պարետի որոշմամբ** Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքով կամ առանձին համայնքներում կարող է արգելվել տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացումը»:

ՀՀ ամբողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարելուց հետո ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ պարետին վերապահված լիազորությունների հիման վրա պարետի որոշումներով սահմանափակվեցին տնտեսական գործունեության առանձին տեսակներ, պարետի մի շարք այլ որոշումներով (օրինակ՝ թիվ 20, 22, 24, 28, 29, 30, 33) ժամանակավորապես սահմանափակվեցին մի շարք տնտեսվարողների գործունեություններ:

Մասնավորապես, ՀՀ պարետի՝ «ՀՀ ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» 17.03.2020 թվականի որոշմամբ Հայաստանի Հանրապետության ողջ տարածում կիրառվեցին ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ի 298-Ն որոշման 17-րդ կետով սահմանված սահմանափակումները 20 և ավելի անձանց մասնակցությամբ անցկացվող հանրային միջոցառումների նկատմամբ:

ՀՀ պարետի՝ «ՀՀ ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» 03.05.2020 թվականի թիվ 63 որոշման թիվ 1 հավելվածով ևս սահմանվեցին արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված՝ ՀՀ ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող սահմանափակումները և այդ հավելվածի 56.1. կետով սահմանափակվեցին ռեստորանների և հանրային սննդի շարժական կետերի ծառայությունը: Թույլատրվեց բացառապես բացօթյա ծառայությունների մատուցումը:

Պարետի 14.05.2020 թվականի թիվ 74 որոշմամբ 03.05.2020 թվականի թիվ 63 որոշման մեջ կատարվեցին լրացումներ և փոփոխություններ և այդ որոշումը շարադրվեց նոր խմբագրությամբ: Որոշման նոր խմբագրության 7-րդ հավելվածի 6-րդ կետի 4-րդ կետի համաձայն. «Հանրային սննդի օբյեկտներում արգելվել է 5 հոգուց ավել անձանց մասնակցությամբ միջոցառումների իրականացումը»:

Պարետի 03.06.2020 թվականի թիվ 110 որոշմամբ 03.05.2020 թվականի որոշման մեջ կատարվեցին փոփոխություններ և այն շարադրվեց նոր խմբագրությամբ: Որոշման նոր խմբագրության 7-րդ հավելվածի 6-րդ կետի 4-րդ

ենթակետի համաձայն. «Հանրային սննդի օբյեկտներում արգելվում է նույն սեղանի շուրջ 5 հոգուց ավել անձանց ներկայությունը»:

Պարետի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ որոշումներն ընդունվել են «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ Կառավարության 2020 թ. մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման հիման վրա, որը պրակտիկայում հանգեցնում է մի իրավիճակի, երբ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է մեկ այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կատարումն ապահովելու համար, ինչն անթույլատրելի է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտն է: Մյուս կողմից որպես ենթաօրենսդրական իրավական ակտ ընդունված պարետի որոշումները պետք է համապատասխանեին «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի մյուս պահանջներին, այդ թվում՝ պարտադիր փորձաքննության, օրենսդրական տեխնիկային կանոններին, ինչը ևս պահպանված չէ:

Այսպիսով, գնահատելով տնտեսական գործունեության նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ պարետի որոշումների իրավաչափությունը՝ կարող ենք արձանագրել, որ դրանք իրավաչափ չեն, քանի որ պարետը նորմատիվ իրավական ակտ կայացնելու լիազորությամբ օժտված չի եղել (հատկապես մինչև «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2020 թվականի ապրիլի 29-ին ընդունված ՀՕ-238-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) և պարետի կողմից ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ օրենսդրական փոփոխությունների միջոցով փորձ է արվում օրինականացնել մինչև փոփոխությունների կատարումը առանց համապատասխան լիազորությունների պարետի ընդունած որոշումները՝ վարչապետի կամ փոխվարչապետի լիազորությունները պարետին վերապահելու միջոցով:

Պարետի գործողությունները միջամտել են տնտեսվարող սուբյեկտների՝ Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներով նախատեսված տնտեսական գործունեության ազատության և սեփականության իրավունքներին, որի շրջանակում չի պահպանվել օրինականության սկզբունքը: Ավելին, չի ապահովվել միջամտությունների համաչափությունն, արդարացիությունն ու անխտրական բնույթը: Այսպես՝

1. *Արտակարգ դրության շարունակական երկարագծումն այլևս իրավաչափ չէ.*
«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝
1. Հայաստանի Հանրապետության **ամբողջ տարածքում հայտարարվող արտակարգ դրության ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը**, իսկ առանձին տարածքներում՝ 60 օրը:
2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետների ավարտից հետո արտակարգ դրությունը դադարում է: Եթե մինչև նշված ժամկետների ավարտը չեն վերացել այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել արտակարգ դրություն հայտարարելու համար, **արտակարգ դրության ժամկետը կարող է երկարաձգվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ սույն օրենքով արտակարգ դրություն հայտարարելու համար սահմանված կարգով և սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները չգերազանցող ժամկետներով:**

Հայաստանում արտակարգ դրություն է հայտարարվել մարտի 16-ից: Արտակարգ դրության վաղ փուլերում իշխանությունը, վկայակոչելով «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 5-րդ հոդվածը, նշում էր, որ արտակարգ դրությունն անվերջ երկարաձգել հնարավոր չէ: Մյուս կողմից քննարկման առարկա էր դառնում այնպիսի օրենսդրական փոփոխությունների կատարման հարցը, ինչը հնարավորություն կտար իրականացնել հակահամաճարակային միջոցառումներ և կիրառել որոշակի սահմանափակումներ առանց արտակարգ դրության ռեժիմի: Այդուհանդերձ, նման փոփոխություններ չկատարվեցին, իսկ արտակարգ դրությունը երկարաձգվել է արդեն 4 անգամ՝ մինչև օգոստոսի 12-ը: Միաժամանակ, չկա որևէ խոստում կամ երաշխիք, որ համավարակի գոյության պայմաններում իշխանությունը մտադիր է վերացնել արտակարգ դրությունը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանում կորոնավիրուսի դեմ պայքարը նույնացված է անվտանգության մի շարք միջոցառումների հետ (հատկապես, դիմակի պարտադիր կրման պահանջի հետ), որոնք բավարար իրավական հիմքերով իրացվելի են բնականոն ռեժիմի պայմաններում, չկա որևէ լեգիտիմ շահ, որը կարող է արդարացնել արտակարգ դրության երկարաձգումը:

Եթե համավարակի տարածման վաղ փուլերում արտակարգ դրություն հայտարարելը հրամայական էր, ապա կորոնավիրուսի հետագա տարածումը չզսպող պետության անարդյունավետ քաղաքականության հետևանքով անսահմանափակ հայեցողական լիազորություններով արտակարգ ռեժիմի տևական հանդուրժումը, լրջորեն վտանգում է իրավունքի գերակայությունն ու մարդու իրավունքները:

Արդյունքում, Կառավարության ոչ արդյունավետ գործողությունների հետևանքով համավարակի կանխարգելման դանդաղ տեմպի պայմաններում արտակարգ դրության ռեժիմը դարձել է տևական: Չնայած արտակարգ դրությունը վերացնելու գլոբալ միտումներին՝ ՀՀ կառավարություն անգամ չի ապահովում վերացման հնարավոր ժամկետների կանխատեսելիությունը:

2. *Թեև Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման Հավելված 17-րդ կետը լրացվեց Կառավարության 14.05.20թ. N 729-Ն որոշմամբ և սահմանվեց, որ հանրային միջոցառումներին վերաբերող սահմանափակումները կարող են կիրառվել նաև որպես պայմանով սահմանափակումներ՝ պարետի կողմից սահմանված կարգով և պայմաններով, սակայն գործնականում սահմանափակումները նույն ծավալով շարունակեցին կիրառվել:*

3. *Թեև սահմանվեց պարետի որոշումներով հանրային միջոցառումների սահմանափակումներից բացառություններ կատարելու հնարավորություն, դրանք ոչ հիմնավոր կերպով չկիրառվեցին, անգամ այն դեպքերում, երբ տնտեսվարող սուբյեկտներն պատրաստական էին պարտադիր պահանջներից զատ հետևել անվտանգության հավելյալ կանոնների:*

4. *Անհամաչափ և խտրական բնույթի միջամտություններ կիրառվեցին հանրային միջոցառումներ կազմակերպող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ:*

Մայիս ամսից թույլատրվեց հանրային սննդի օբյեկտների գործունեությունը՝ նույն սեղանի շուրջ 5 հոգուց ոչ ավել անձանց և հաճախորդների սպասարկման ընդհանուր տարածքում յուրաքանչյուր 20 քառ. մետրի հաշվարկով 10-ից ոչ ավելի հաճախորդի միաժամանակյա ներկայությամբ, վերականգնվեց բարերի, սրճարանների, գարեջրատների, պանդոկների, հանգստյան տների գործունեությունը: Ընդ որում թույլատրվեց նաև հարսանիքների, հանդիսավոր միջոցառումների համար սրահների տրամադրումը՝ոչ ավելի, քան 5 հոգու մասնակցությամբ միջոցառումների համար՝ առանց նույն սրահում միաժամանակ անցկացվող միջոցառումների կամ նույն սրահում գտնվող անձանց առավելագույն թվաքանակի սահմանափակումների:

Արդյունքում, հանրային սննդի օբյեկտներում հնարավոր և հանդուրժելի դարձավ մի քանի տասնյակից ավելի մարդկանց համաժամանակյա ներկայությունը,

իսկ հանդիսավոր միջոցառումների համար տրամադրվող սրահում միաժամանակ մեկից ավելի միջոցառումների իրականացումը: Նշված վայրերում ֆոնային երաժշտության վերաբերյալ սահմանափակումներ չկիրառվեցին: Ավելին, սոցիալական ցանցերում տարածվեցին DJ-ների մասնակցությամբ ժամանցային միջոցառումների տեսանյութեր:

Չնայած նշված «ազատական» կարգավորումներին՝ անհամաչափ և խտրական բնույթի միջամտություններ կիրառվեցին հանրային միջոցառումներ կազմակերպող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք, ըստ էության, պիտանի և անհրաժեշտ չեն համավարակի կանխարգելման նպատակին: Բազմաթիվ կազմակերպությունների արգելեցին կազմակերպել հանդիսավոր միջոցառումներ՝ անկախ միջոցառման մասնակիցներին տարբեր սեղանների շուրջ նստելու հանգամանքից: Արգելվեցին կենդանի կատարումները:

Այս առումով առողջության անվտանգության և ապահովման տեսանկյունից որևէ կերպ բացատրելի չէ, թե ինչո՞ւ է թույլատրվում 100 հաճախորդ սպասարկող առևտրի կենտրոնի կամ սննդի օբյեկտի գործունեությունը, սակայն արգելվում է 100 հոգանոց միջոցառում սպասարկող ռեստորանի գործունեությունը, եթե երկու դեպքում էլ պահպանելի են նույն սեղանի շուրջ 5 հոգուց ոչ ավել անձանց նստելու արգելքը և անվտանգության պարտադիր կանոնները: Կամ ինչո՞ւ է թույլատրվում ֆոնային երաժշտությամբ փակ սրճարանում ժամանցը, բայց նույն կերպ չի թույլատրվում ռեստորանում սպասարկումը՝ մեկ դաշնակահարի կենդանի մասնակցությամբ:

Վերոնշյալ ոչ իրավաչափ գործելակերպի պայմաններում, տնտեսական գործունեությունը մեծապես տուժել է: Թեև ՀՀ օրենսդրությունը նախատեսել է երաշխիքներ՝ արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներից կամ դրանց հետևանքների վերացման գործողություններից տուժած անձանց նյութական վնասը փոխհատուցելու կամ անհրաժեշտ օգնություն տրամադրելու վերաբերյալ, այս առնչությամբ կառավարության քաղաքականությունը ևս չի եղել հիմնավոր և թիրախավորված:

Մասնավորապես, կառավարությունը նպատակային աջակցություն չի տրամադրել այն ոլորտներին, որտեղ կիրառվել են բացարձակ արգելքներ: Օրինակ՝ աջակցության որևէ ծրագիր չի թիրախավորել այն սուբյեկտներին, որոնք խտրական ձևով զրկված են եղել հանդիսավոր միջոցառումների կազմակերպելու հնարավորությունից (մանկական զվարճանք կամ հարսանիք կազմակերպող ռեստորանը կամ կենդանի երաժշտական ակումբերը):

Ինչ վերաբերում է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների կիրառմանը, ապա հուլիսի 20-ի դրությամբ Մարդու իրավունքների պաշտպանը դրանց վերաբերյալ ստացել է 794 բողոք, որոնցում բարձրացված հարցերի մի մասը առնչվել է տեխնիկական խնդիրներին, իսկ մյուս մասը՝ կարգավորվածության բացերին: Մարդու իրավունքների պաշտպանը, կարևորելով հակաճգնաժամային միջոցառումները, արձանագրել է միջոցառումների հասցեականության անհրաժեշտությունը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել.

ա. Կորոնավիրուսի դեմ պայքարի մեկնարկը ժամանակային առումով հապաղել է և ուղեկցվել է պատասխանատու անձանց այնպիսի արտահայտություններով, որոնք հանրային ընկալումների մեջ անլրջացրել են համավարակի դեմ պատասխանատու պայքարի անհրաժեշտությունը:

բ. Արտակարգ դրության հայտարարմամբ Կառավարությունը սահմանել է լրջագույն սահմանափակումներ, որոնք չեն արտացոլում հավարակի դեմ պայքարի համընդհանուր միտումները: Մասնավորապես, արգելքներ են նաև սահմանվել զանգվածային լրատվության միջոցների գործունեության նկատմամբ, իսկ որոշակի պայմաններում հանրային միջոցառումների իրականացման հնարավորության պարագայում ամբողջովին արգելվել է հավաքների և գործադուլների անցկացումն ու դրանց մասնակցությունը:

գ. Արտակարգ դրության ժամանակ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները էապես սահմանափակվել են պարետի նորմատիվ իրավական ակտերով, որոնք ընդունելու լիազորություն պարետը չի ունեցել, չունի և չի կարող ունենալ՝ առանց համապատասխան սահմանադրական փոփոխությունների: Պարետի կողմից ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, որոնց հիման վրա են կիրառվել նաև տնտեսական գործունեության սահմանափակումները, չեն համապատասխանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Այս հանգամանքն ինքնին խարխլում է սահմանափակումների իրավականությունը՝ դրանք դարձնելով Սահմանադրությանը և օրենքներին հակասող: Ավելին, տնտեսական գործունեության մի շարք սահմանափակումներ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել են անհամաչափորեն և ունեցել են խտրական բնույթ:

դ. Համավարակի դեմ պայքարում սահմանված որոշ սահմանափակումներ չեն բավարարել նաև իրավունքների սահմանափակման պիտանիության և անհրաժեշտության չափանիշներին: Սահմանափակման համար ընտրված միջոցները հաճախ չեն եղել չափավոր և համարժեք սահմանափակվող հիմնական իրավունքների և ազատությունների նշանակությանը: Ավելին, առանձին դեպքերում հանրային իշխանության մարմինների կողմից ուղղակիրեն կիրառվել են անձնական կյանքը խախտող միջոցներ, ինչպիսիք են՝ առանց անձի համաձայնության լուսանկարների օգտագործումը կամ ինքնալուսանկարման ոչ իրավաչափ պահանջ պարտադրելը:

ե. Համավարակի դեմ պայքարը նաև ուղեկցվել է տեխնոլոգիաների վերահսկողության ներուժի օգտագործմամբ, որը չի եղել վերահսկելի, չափելի և ստուգելի: Գործնականում նաև չի ապահովվել անձնական տվյալների անվտանգությունը:

զ. Կորոնավիրուսի տարածումը չզսպող անարդյունավետ քաղաքականության հետևանքով՝ անսահմանափակ հայեցողական լիազորությունների հիման վրա արտակարգ ռեժիմի պահպանումը լրջորեն վտանգում է իրավունքի գերակայությունն ու մարդու իրավունքները:

**Հեղինակ՝ Սահակյան Սիրանուշ**